

ԿՐՕՆԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ՐԱՖՖԻԻ ՍՏԵՂՍԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ՝

ՆՈՐԱ ՊԱՐՈՒԹՃԵԱՆ
nora.baroudjian@gmail.com

ՄՈՒՏՔ

Իր ազգային դիմագիծը, թեկուզ տեսականորեն, քրիստոնեության մէջ փնտռող եւ գտնել կարծող հայ հաւաքականութեան համար անշուշտ դիրքին չէ մարսել, նոյնիսկ ընկալել *մահմետական հայ* հասկացութիւնը:

Մահմետական հայու պատկերին անմիջապէս առնչուած կրօնափոխութեան երեւոյթը իր բազմապիսի նկարագիրներով առկայ է պատմութեան հին ժամանակներէն, ու բնականաբար արտացոլուած նաեւ հայ գրական մշակոյթին մէջ:

Կը հաւատանք որ երեւոյթին նկատմամբ նախորդ սերունդներու մեր մտատրականութեան խօսքը իր տեղը ունենալու է այսօրուան մեր խորհրդածութիւններուն մէջ: Անոնցմէ մէկն է ԺԹ. դարու յանձնառու գրող-մտատրական Րաֆֆին, որուն գեղարուեստական գործերուն մէջ վիպասանն ու պատմութիւն ուսումնասիրողը կ'ընթանան երբեմն զուգահեռ, երբեմն հակառակ ուղղութեամբ: Րաֆֆին թէ՛ գեղարուեստական արձակով, թէ՛ հրապարակախօսութեամբ լայնօրէն անդրադարձած է իր ժամանակաշրջանը յուզող կրօնափոխ եւ դաւանափոխ հայերու հարցին. երեւոյթ մը, որ ներազգային երկպառակութեան առիթ տուած է ատենին, ալեկոծած՝ հայ ընկերային կեանքը:

Սոյն աշխատութեան նպատակն է լուսարձակի տակ առնել կրօնափոխութեան նիւթին արծարծումը Րաֆֆիի կողմէ, անոր գրական ժառանգութեան ընդմէջէն:

Շեշտենք որ այս աշխատութեան մէջ Րաֆֆիին համար գործ դրուած *պատմաբան* եզրը պէտք չէ ընդունիլ մերօրեայ պատմաբանի հասկացութեամբ, այլ հասկնալ պատմութիւնը ազգային գաղափարախօսութեան իր ըմբռնումներուն ծառայեցնողի դերին մէջ: Վիպասան Րաֆֆին կը ծառայէ գաղափարախօս Րաֆֆիին. «*Մեր գործնական դարում այլեւ չի պահանջում գեղարուեստը գեղարուեստի համար, այլ՝ գեղեցիկի մէջ գտնել օգտաւէտը եւ կենսականը*»²: Գրողը պատմութեան ստրուկը չէ. «*Եթէ նա ամենայն ճշտութեամբ կը հետեւի պատմութեանը, այլեւ չի լինի սպեղծագործող, այլ միայն արտագրող: ...: Այդ բոլոր ուսումնասիրութիւններից նա առնում է այն գծերը ինչ որ պէտք է իր սպեղծագործութեան համար: ... Նա իրատուը ունի ոչնչացնելու պատմութեան փաստական ճշմարտութիւնը, որովհետեւ նրան պէտք են գաղափարական ճշմարտութիւններ*»³:

ՐԱՖՖԻ ՎԻՊԱՍԱՆՆ ՈՒ ՊԱՏՄԱՐԱՆԸ. ՍԱՄՈՒԷԼ ՊԱՏՄԱՎԷՊԸ ԵՒ
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԿՐՕՆԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ
ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Րաֆֆիի վերոնշեալ մօտեցումը զինք կը դնէ ստեղծագործական հա-
կասութեան մը մէջ, որ երբեմն հանդէս կու գայ միեւնոյն վէպին մէջ իսկ:
Պատմութիւնը իր գաղափարներուն ծառայեցնելու խնդիրը, սակայն,
Րաֆֆի չի լուծեր պատմութեան դէմ մեղանշելով: Ընդհակառակը: Վիպա-
յին նիւթի զարգացման մէկ կէտին, վիպասան Րաֆֆիէն յանկարծ կ'ան-
ջատուի պատմութիւն ուսումնասիրողը, որ փակագիծ մը բանալով կը
սկսի պատմական տուեալներով յագեցած տեղեկութիւններ տալ, որմով՝
վէպին տուեալ գլուխը կը ստանայ պատմութեան դասագիրքի արժէք: Այդ
գլխուն մէջ ան կը կատարէ նոյնիսկ վէպին մէջ իր պաշտպանած գաղա-
փարներուն հակասող, բայց եւ այնպէս պատմական հաստատումներ:
Սամուէլ պատմավէպը նմուշ մըն է: Մէկէ աւելի օրինակներու մէջէն նշենք
մեր նիւթին առնչուածը: Մինչ վիպասանի գրիչին տակ դրական հերոսներ
Սամուէլ⁴ եւ Մուշեղ⁵ պայքար կը մղեն պաշտպանելու քրիստոնէութիւնը
իբրեւ ազգային գերագոյն նպատակ եւ չէզոքացնելու կրօնափոխութեան
կողմնակից իրենց արենակիցները, որոնք, ըստ վէպի տրամաբանու-
թեան, ազգը դէպի կործանում կ'առաջնորդեն, պատմաբան Րաֆֆին շե-
ղում կատարելով մօտ 40 էջի վրայ կը ներկայացնէ հեթանոսութենէն
քրիստոնէութեան անցման ժամանակաշրջանի խնդիրները: Այնտեղ, իմի-
ջիայլոց, կը հանդիպինք այսպիսի հաստատումի մը. «Ոսկին, արծաթը,
մարմարիոնը հեշտ էր կործանել, բայց այն զգացմունքը, որ միացած էր
ժողովուրդի սրտի եւ հոգու հետ, այն հաւաքը, որ նա ունէր դէպի իւր հայ-
րենական աստուածները, դրանք դեռ մնում էին եւ մնացին շար դարեր
այդ կործանումից յետոյ: Սուրը եւ հուրը չկարողացան ոչնչացնել նրանց»⁶:
Վէպին պաշտպանած գաղափարին հակոտնեայ հաստատում մըն է այս:
Դարաւոր, ամրապնդուած կրօնքը հեթանոսութիւնն է իր հայրենական
աստուածներու հաւատքով. այստեղ՝ կրօնափոխները քրիստոնեաներն
են, 'դաւաճանները', ներմուծուած կրօնքով մը ժողովուրդին հարազատ
դիմագիծը աղաւաղել կամեցողները: Գրիգոր Լուսաւորիչ Կեսարիայէն
սրբութիւններ բերած է Տարօն: Երկու կրօնքներու հետեւորդներուն միջեւ
տեղի ունեցած են արիւնահեղ կռիւներ, ուր քրմապետեր «ընկան պարե-
րազմի դաշտում սուրը ձեռքում, հերոսի պէս: ... Եւ մեծագանձ մեհեաննե-
րի հարստութիւնը հայոց նոր խաչակիրների առաջարկութեան առարկայ
դարձաւ»⁷: Յիշենք, որ Սամուէլ վէպը 364-400 տարիներու դէպքերուն կը
վերաբերի. այսինքն՝ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պաշտօնակա-
նացումէն հազիւ երեք քառորդ դար ետք ինկած ժամանակ մը: Հայաս-
տանի մէջ պատմական արմատներ ունեցողը հեթանոսութիւնն է, ոչ քրիս-

տոնէութիւնը, զոր վիպասանը կ'ուզէ ներկայացնել իբրեւ հայրերու կրօնք, բայց պատմաբանին լուսաբանութիւնները հակառակը կ'ընդգծեն: Այս պատմավէպին մէջ է նաեւ, որ Բաֆֆին կը պատմէ Տարօսի արեապաշտ հայերու մասին, որոնք քրիստոնեայ հայերու հալածանքէն վախնալով առերես քրիստոնեայ դարձած են⁸: Փորձառութիւն մը, որ դարեր ետք, Հայոց Ցեղասպանութեան հետեանքով առերես մահմետականութիւն ընդունած հայեր իրենց գոյութիւնը պահպանեցին գաղտնաբար հաւատարիմ մնալով այս անգամ՝ քրիստոնէութեան⁹: Սամուէլ կը վարանէր կրօնական այս պատերազմին մէջ ժողովուրդին վստահելէ, քանի ան տակաւին կը գտնուէր աւանդական նախապաշարումներու մէջ¹⁰: Հակասութեան այս թնճուկը կը լուծէ վիպասան Բաֆֆին, նորամոյժ կրօնքին հայրենասիրական նկարագիր տալով: Կը միջամտէ Մեսրոպի (Մաշտոց) քննադատող կերպարը, քրիստոնէութեան Հայաստան մուտքով ազգային կորսուած տարրի փնտռուիլը կատարելով. «Արհամարհեցինք ինչ որ հին էր, ինչ որ հեթանոսական էր: ... Մենք թողուցինք մեր նախնականը, մեր ազգայինը եւ սկսեցինք օգարինը սիրել»¹¹, ու կը հասկնանք թէ ինչպէ՛ս կը սկսի քրիստոնէութիւնը հայացնելու միջոց գտնելու անոր տագնապը:

Ահաւասիկ, հայրենասիրութիւն եւ քրիստոնէութիւն նոյնացած, միաձուլուած հանդէս կու գան. քրիստոնէութիւնը անբաժան մասը կը դառնայ հայրենասիրութեան: Հեղինակին այս գաղափարախօսութիւնը իր կերպարին՝ սպարապետ Մուշեղին մտածել կու տայ որ թշնամին մեծ սխալ գործած է դպնալով ժողովուրդի ամենաարքազան զգացումներուն, այսինքն՝ անոր եկեղեցիին: Իսկ վէպի աւարտին Սամուէլին ըսել կու տայ, թէ երբ կորսուին կրօնը, լեզուն, ազգային աւանդութիւնները, երբ հայը սկսի պարսից սովորութիւններով ապրիլ եւ անոր լեզուով աղօթել, այլեւ ի՞նչ հայութիւն կը մնայ¹²: Ասով հանդերձ, Սամուէլով պատմաբան Բաֆֆին ընթերցողի ուշադրութեան յանձնած կ'ըլլայ հայ ժողովուրդի պատմութեան մէջ կրօնափոխութեան առաջին փորձառութիւնը. անցում դէպի քրիստոնէութիւն:

ՎԱՐԴԱՆ-ՎԱՍԱԿ

Պատմաբանի եւ վիպասանի հակադրութեան դիպուկ օրինակ է նաեւ Վարդան Մամիկոնեանի եւ Վասակ Սիւնիի կերպարներուն նկատմամբ Բաֆֆիի վերաբերումը: Բաֆֆիի վէպերուն մէջ՝ Սալբի, Խենթը, Դաւիթ Աէկ, Կայծեր, Վարդան կը տողանցէ իբրեւ հայրենասէր հերոսի մշտավառ եւ ընդօրինակելի կերպար: Կողքին, դաւաճանները կը կնքուին Վասակի անունով, յաճախ Մերուժանի (Արծրունի) անուան ընկերակցութեամբ: «Խաւարասէր փերփէրները ... օգնական գտնելով ... եւ մի քանի վասակներին եւ մեհրուժաններին, ... փակեցին պարոն Աշխարունու վարժարանի

դռները...»¹³: Այլ տեղ, Սալբիի հերոսուհին կը բացականչէ. «Ախ, չար վասակներ ... ա'խ դժոխքի որդիք...մինչեւ ե'րբ դուք պիտի անպակաս լինիք խեղճ հայերի միջից ... մինչեւ ե'րբ ձեր թունաւոր շունչը պիտի ապականէ մեր աշխարհի օդը»¹⁴: Դաւիթ Բէկի Տաթևի իշխան Դաւիթ Ուրացողը կը կոչուի երկրորդ Վասակ, նոր Վասակ¹⁵: Իսկ Իսենթի Թոմաս էֆենտին, չարագործութիւններէն զոջացած, իջած 'արդարադատի' գեհէնը, այնտեղ կը տեսնէ Վասակը, Մերուժանը, Վեստ Սարգիսը, Կայէնը ու ինքզինք արժանի չի զգար Հայաստանի հողին, քանի որ իր գարշելի դիակը կը պղծէ անոր սրբութիւնը¹⁶: Մինչ Վարդան կը ներկայանայ իբրեւ անարդարութեան դէմ մարմնացեալ բողոք: «Մենք ունեցել ենք ուրիշ շապի հերոսներ, բայց դրանցից եւ ոչ մէկը Վարդան չէ կարող լինել», քանի որ Վարդանի անձնաւորութեան մէջ միացած էր ժողովուրդը, կը շեշտէ Րաֆֆի¹⁷: Այսուամենայնիւ, մեծարուած Վարդանի զուգահեռ, Կայծերու հերոս Ասլանի բերնով 'դաւաճան' Վասակի մասին կ'ըսուի հետեւեալը. «Վասակը իր ժամանակի նոյնպէս ամենաանշանաւոր մարդն էր: Եթէ բոլոր հայ նախարարների գլուխները թափ փալու լինէիր, նրա կէսի չափ խելք դուրս չէր գայ:... Նրա պատմութիւնը գրողները նրա հակառակ կուսակցութեանն էին պատկանում: Իսկ եթէ նրա խորհուրդներին հետեւելու լինէին, նա մեծ օգուտներ կարող էր հասցնել իր հայրենիքին: ... Վասակին պէտք է հասկանալ, իսկ նրան հասկանալու համար պէտք է լաւ ուսումնասիրել հայոց պատմութիւնը»¹⁸:

Ինչ ալ ըլլայ Րաֆֆիի գրական-գեղարուեստական հայեացքը, իբրեւ գրող ան հանդէս կու գայ նաեւ պատմական իրականութեան պաշտպանութեամբ, կամ գոնէ՝ ընթերցողը այդ ուղղութեամբ խորհրդածելու մղումով:

Ըստ Րաֆֆիի՝ վէպը ազգերու բարոյական եւ իմացական կեանքին պատմագրութիւնն է, սովորութիւններուն կենդանի պատկերը, կախարդական հայելի մը, ուր տեսնելով իրենց տգեղ պատկերները, զանոնք բարեկարգել կը ջանան¹⁹: Իսկ ի'ր գրականութիւնը, արծազանգելով հաւասարապէս թէ՛ արեւելահայ եւ թէ՛ արեւմտահայ զանգուածներու կեանքին, ունի համահայկական ընդգրկում: «Ժողովուրդի զգացմանց եւ գաղափարաց ճշմարիտ թարգման»ը կը համարէ զինք Արփիար Արփիարեան²⁰:

Այս բովանդակութեան մէջ է, որ կը փորձենք հասկնալ կրօնափոխութեան ու դաւանափոխութեան նիւթի արծարծումը Րաֆֆիի կողմէ: Հոս՝ շեշտը պիտի դրուի ոչ թէ դաւանափոխութեան նիւթին վրայ, այլ այդ նիւթի աղբիւր Րաֆֆիի մտորումներուն՝ եկեղեցիի, կրօնքի, ազգութեան մասին, որոնք անմիջապէս կ'առնչուին կրօնափոխութեան հարցին:

Անշուշտ, կրօնափոխութիւն եւ դաւանափոխութիւն նոյն բաները չեն: Այսօր յստակ է անոնց տարբերութիւնը: ԺԹ. դարուն սակայն, հայ ժողո-

վորդի կեանքին մէջ նորամուտ դաանափոխութիւնը ընդունուեցաւ տագնապով ու միեւնոյ դարաւերջ, նոյնիսկ Ի. դարու սեմին, շփոթուեցաւ կրօնափոխութեան հետ, ինչպէս կը վկայէ 1901ին գրուած Լէոյի մէկ յօդուածը, մեր կողմէն քիչ մը անդին մատնանշուած:

ԱԶԳՈՒԹԵԱՆ²¹ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Վերը ակնարկուած տագնապը ուղղակիօրէն կ'առնչուի քաղաքական ակնկալութիւններու (Սան Սթեֆանօ, 1878, Պերլին) եւ ժԹ. դարու եւրոպական ընկերափոխութեայական մտքի ծնունդը եղող ազգութեան գաղափարին: Ինչպէս կ'ըսէ Էյի Քըտուրի իր *Nationalism* աշխատասիրութեան մէջ, «Ազգայնութիւնը վերջին 150 տարիներու եւրոպական մտքի արգասիքն է»²²:

Այս գաղափարախօսութեան համաձայն, ինքնորոշման իրատւոյնին պիտի կարենային տիրանալ այն հաւաքականութիւնները, որոնք կ'ամբողջացնէին ազգ կոչուելու պայմանները: Խանդավառուեցան ժողովուրդներ, որոնք կը կարծէին գոհացնել ազգային կոչումի պահանջները, ու դուրս գալով քաղաքական հրապարակ, ինքնորոշման իրենց իրատւոյնը պաշտպանել ջանացին:

Ըստ գերմանացի փիլիսոփայ Էմմանուէլ Քանթի, ազգայնութիւնը ինքնին ազգային ինքնորոշման վարդապետութիւն մըն է²³:

Իսկ Էրնեսթ Ռենան կը շեշտէ, որ ազգերը նոր են պատմութեան մէջ: Հնադարը ծանօթ չէր անոնց: ...ԺԸ. դարը փոփոխութիւն բերաւ. դարատուր նուաստացումէ ետք մարդը հասաւ ինքնայարգանքի եւ իր իրատւոյններու գաղափարին: Հայրենիք եւ քաղաքացի բառերը իմաստ ստացան: ... Կրօնքը դարձաւ անհատական խղճի հարց²⁴:

Բայց ի՞նչ կը նշանակէր ազգ, կամ որո՞նք էին ազգերը:

Ռենանի համաձայն, ազգը ոգի է, հոգեկան սկզբունք: Անոր բաղկացուցիչ մասերն են անցեալն ու ներկան: Անցեալը՝ հարուստ յիշողութիւններու կտակն է, զոր կ'ապրինք հաւաքականօրէն: Ներկան՝ կամեցողութիւնն ու փափաքն է միասին ապրելու, միասին շարունակելու արժեցնել ինչ որ ժառանգուած է մեզի²⁵:

Եւրոպայի մտաւորականութեան կողմէ յառաջ քաշուեցան բազմաթիւ վարկածներ, ուր մատնանշուեցան լեզուի, ծագում-արեւնակցութեան, մշակոյթի, կրօնքի, պետութեան տարրերը իբրեւ ազգայնութեան գաղափարախօսութեան դրսեւորումներ:

Օսմանեան Կայսրութեան մէջ ԺԶ. դարէն ի վեր հայերը կ'ապրէին կրօնական համայնքի կարգավիճակով, իսկ Ռուսական Կայսրութեան մէջ՝ 1836ի Պոլսոյնիայի հրամանագրով: Այսպիսով, հայուն պատկանելիութիւնը կը ստանար կրօնական, նոյնիսկ եկեղեցական շեշտուած դիմագիծ: Ընդամենը՝ կրօնական ինքնութիւն:

Այս ձեւով է որ դարերու ընթացքին, տաճկահայոց մօտ մանաւանդ, Հայ Առաքելական եկեղեցւոյ պատկանելիութիւնը եւ հայ ըլլալու հանգամանքը միաձուլուած կը ներկայանան, գրեթէ նոյնացած: Որոշ վերապահութեամբ կրնանք մտածել, որ ռուսահայոց պարագային այս երեւոյթը նուազ խտութեամբ կը շեշտուի, քանի այնտեղ քրիստոնէութեան ու հայու պատկանելիութեան առնչութիւնը արդիւնք է մշակութային եւ պատմական ժողանգութեան, ու պետական իրավիճակ կը ստանայ միայն ԺԹ. դարու առաջին քառորդէն ետք: Մինչդեռ ԺԶ. դարէն ի վեր տաճկահայեր այդ գոյավիճակին ենթակայ էին: Հետեւաբար, երբ ազգութեան գաղափարախօսութիւնը շահագրգռեց նաեւ հայութիւնը, ռուսահայ յառաջադէմ մտաւորականութիւնը, ինչպէս Մոսկուայի *Հիսիսափայլ* ամսագրի խմբագիր Ստեփաննոս Նազարեանց²⁶, գլխաւոր աշխատակիցներէն՝ Միքայէլ Նալբանդեան²⁷, Թիֆլիսի *Մշակ* թերթի խմբագիր Գրիգոր Արծրունի²⁸, անոր գլխաւոր աշխատակիցներէն՝ Բաֆֆի, հաստատ համոզումով ազգութեան գաղափարին զիջեցան եկեղեցւոյ դարաւոր հեղինակութիւնը, որ մինչ այդ անձեռնմխելի կը համարուէր:

Հիսիսափայլի մէջ Նազարեանց յստակօրէն զանազանեց ազգի եւ կրօնքի հարցերը²⁹: Գիտակից ըլլալով ազգի գոյատեւման համար պետութեան մը ստեղծման կարելիութեան, եւ հայերու պարագային տուեալ պայմաններու մէջ ատոր անկարելիութեան՝ ան հայուն ազգութիւնը առնչեց մշակոյթին: Կրօնական հայկականութենէ ան անցաւ մշակութային հայկականութեան³⁰:

Նալբանդեան հայրենիքի ազատութեան հարց բարձրացուց, ազատութիւնը համարելով մարդու ամենամեծ բարիքը³¹:

Ստեփան Ոսկան³² մարդկային արժանապատուութեան տեղը ամրացուց, զայն հաւասարեցնելով, նոյնիսկ գերադասելով հայրենիքի սէրէն³³:

Իսկ Արծրունի *Մշակի* առաջին թիւին մէջ իսկ յայտարարեց. «*Երէկ մենք կրակարանական ազգ էինք, այսօր մենք ազգասէրներ ենք: Էգուց մենք պէտք է աշխատողներ դառնանք*»³⁴: Ազգ մը գոյատեւելու համար պէտք է դառնայ ազգութիւն, իր մէջ զարգացնելով այլ ազգերէ զատորոշող յատկանիշերը՝ լեզու, գրականութիւն, արուեստ:

Բաֆֆի կը համարէ որ ազգայնութեան (Բաֆֆի այս եզրը կը գործածէ) խնդրին լուծում գտնելու ժամանակը եկած է: Կրօնքը չէր կարողացած ծնիլ ազատութիւն, արդար օրէնք, իրատունք: Ասունք մարդկային կեանք մուտք պիտի գործէին լուսատրութեան եւ քաղաքակրթութեան միջոցով³⁵: Ըստ իրեն՝ լուսատրեալ ազգերու համար կրօնքը կամ եկեղեցին ազգութեան հիմ չի համարուիր այլեւս, այդ միտքը կորսնցուցած է իր նշանակութիւնը³⁶: Ազգութեան գաղափարը կը պայմանաւորուի ցեղական յատկութիւններով: Կրօնքը ըլլալով մարդկային զգացումներու արտայայտութիւն՝ միշտ կը փոխուի, հետեւաբար չի կրնար ազգութեան հիմ դառնալ³⁷: Իսկ որոնք են ազգին հաստատուն հիմքերը. ըստ Բաֆֆի՝ լեզու, հայրենիք, եկեղեցի, ցեղական յատկութիւններ³⁸, որոնց մէջ առաջին տեղը կը գրաւէ լեզուն: Այն է՝ եւ միշտ կը մնայ ազգի պահպանութեան հիմը³⁹:

Կրօնքը փոխարինել մշակոյթով: Ահա, այս տեսակէտն է որ Բաֆֆի եւ ԺԹ. դարու ռուսահայ մտատրական լուսատրեալ սերունդը կը ջանան ներմուծել ժամանակի գաղափարական հոլովոյթին մէջ, յեղաշրջելով հայկական միասնականութեան շուրջ կառուցուած դարաւոր տեսութիւնը:

ԿՐՕՆՔ ԵՒ ԱԶԳՈՒԹԻՒՆ

Բաֆֆի Մշակի էջերուն մէջ բազմաթիւ առիթներով անդրադարձած է այս նիւթին: «Ազգայնութեան գաղափարը վաղուց անծանօթ էր մեզ՝ հայերուս, դեռ ներկայ դարուս Բ. կիսաբաժնի մէջ սկսաւ արծարծուիլ մեր մտածողների գլխում, բայց այնքան աղօլք եւ խառնափնթոր կերպով, որ մի որոշ կերպարանք ստանալ չկարողացաւ: Ամենաջերմ եւ ամենաանկեղծ ազգասէրները շփոթում էին ազգը կրօնի հետ եւ կրօնը՝ եկեղեցու հետ»⁴⁰:

Այդ ամենաջերմ եւ ամենաանկեղծ ազգասէրներէն մէկն ալ ինք էր՝ Բաֆֆին: Վիպասան Բաֆֆին ալ իր կարգին կը միաձուլէր կրօնքն ու ազգութիւնը, կը շփոթէր դաւանափոխութիւնն ու կրօնափոխութիւնը:

Կրօնքի եւ ազգութեան միաձոյլ փոխյարաբերութիւնը յստակ արտայայտութիւն գտած է, օրինակ՝ Սամուէլի եւ Դափթ Բէկի մէջ: Առաջինին մէջ, սպառնացող թշնամիին դէմ հայրենիքը պաշտպանելու միակ միջոցն է քրիստոնէութիւնը: Այնտեղ՝ Սամուէլի կրօնական ջերմեռանդութեան եւ հայրենասիրութեան զատորոշիչ սահմանն անգամ յստակ չէ⁴¹: Իսկ Վահան Մամիկոնեան եւ Մերուժան Արծրունի դաւաճան կը համարուին, քանի որ իրենց պարսկամէտ դիրքորոշմամբ կը սպանեն ազգութիւնը եւ կրօնքը⁴²:

Գալով Դափթ Բէկին, գլխաւոր կերպարներէն՝ Ստեփաննոս Շահումեան Սինիքի դիմադրութեան գլուխ անցնելու համար Դափթ բէկը Հա-

յաստան կը հրափրէ յանուն ազգի, հայրենիքի, եկեղեցիի: Այս երեք արժէքները միացած կը ներկայանան այստեղ⁴³:

Նոյն վէպին մէջ այլ օրինակ մը անլի մասնակի փոխյարաբերութեան մէջ կը ղնէ ազգ-կրօն-եկեղեցի փոխյարաբերութիւնը: Դաւիթ Ուրացողի դուստր՝ Սիրիի եւ ներքինապետ Ահմէտի պարագան է այդ: Երկուքն ալ մահմետական կրօնքի մէջ ստիպողաբար ապրողներ, բայց գաղտնօրէն քրիստոնեայ, որոնց համար քրիստոնէութիւնն ու ազգը, եկեղեցին ու հայութիւնը կ'ըմբռնուին եւ կ'ապրուին մէկը միասով: Առաջինին միջոցով՝ երկրորդը: Սիրիի իր ուրացող հօրը կ'ըսէ. «Դու մեղանչել ես քո ազգի առջեւ, Յիսուս Քրիստոսի առջեւ, որովհետեւ ուրացար մեր սուրբ Գրիգոր Լուսաւորիչը»⁴⁴:

Եռանկիւն մը, ուր ազգ եւ քրիստոնէութիւն ներքեւի գիծին երկու անկիւնները կը զբաղեցնեն, ու երկուքն ալ բռնուած են վերէն գիրենք հսկող երրորդ տարրէն՝ Հայ Եկեղեցոյ հիմնադիր սուրբ Գրիգոր Լուսաւորիչէն: Յանգատը է ուրացող Դաւիթը, քանի որ ուրացած է Հայ Եկեղեցոյ հիմնադիրը:

Մինչ վիպասան Րաֆֆիին գաղափարախօսութիւնը կը պաշտպանէ՝ հոս ընդհանուր ծեով ըսուած ազգութիւն-կրօն նոյնացումը (անոնք երբեմն կը ներկայանան քրիստոնէութիւն-ազգութիւն, կրօն-եկեղեցի-ազգութիւն, եկեղեցի-հայրենիք-ազգութիւն տարբերակներով), պատմաբան ու հրապարակախօս Րաֆֆին հարցը այլապէս կը ներկայացնէ:

Մէկ կողմէն՝ «*Քոյրս գիտենք որ հայը կրօնական ազգ է*»⁴⁵, կ'ըսէ ան, քանի քաղաքական պատասպարանի չգոյութեան պատճառով հայը կրօնքի պահպանութեան մէջ գտած է իր կեանքի խորհուրդը: Միւս կողմէն՝ ան կը գրէ թէ ազգ կը նշանակէ ցեղական ամբողջութիւն, ուր կան եւ կրնան ըլլալ զանազան կրօններ ու եկեղեցիներ⁴⁶: «*Մենք հայ էինք երբ հեթանոս էինք, եւ հայ կը մնանք երբ հազար անգամ կը փոխենք մեր կրօնը*»⁴⁷: Եթէ հայուն ցեղային առանձնայատկութիւնները կը պահպանուին միայն եկեղեցոյ գիրկը, ուրեմն ան ազգ չի համարուիր, այլ կրօնական աղանդ: Անոր մասին չ'արժեք նոյնիսկ մտածել⁴⁸:

Այս երկրորդ միտքի զարգացումը Րաֆֆիին համար սերտօրէն առնչուած է դաւանափոխութեան մեծ խնդրին, որուն առթիւ ան կը կատարէ իր խորացումները ազգ-կրօնք փոխյարաբերութեան շուրջ:

ԿՐՕՆՔ ԵՒ ԴԱՒԱՆԱՆՔ. ԻՄԱՍՏԱՅԻՆ ՆՈՅՆԱՅՈՒՄ

Րաֆֆի *դաւանանք* եւ *կրօնք* բառերը յաճախ կը գործածէ իբրեւ հոմանիշ: Բառերու իմաստային այս նոյնացումը ունի իր պատճառները եւ միայն Րաֆֆիին չի վերաբերիր:

Առաջին պատճառը պետք է փնտռել իր ժամանակի արտայայտչական փնտռողության եւ կարելիութիւններուն մէջ: Բառին իմաստը ստիպուած ենք ճշտել իր բովանդակութեան մէջ: Ցայտուն պարագայ է *կրօնափոխութիւն* բառի գործածութիւնը. զայն պետք է հասկնալ *դաւանափոխութիւն*՝ երբ կը խօսուի քրիստոնեայ կրօնքի ծոցին մէջ իսկ մէկ վարդապետութենէ միւսին անցումի մասին, հայերու պարագային՝ առաքելական եկեղեցիէ հեռանալով յարիւ կաթոլիկ, բողոքական, ժեզուիթ վարդապետութիւններու, մնալով՝ քրիստոնեայ: Եւ պետք է հասկնալ բառին իսկական իմաստով՝ *կրօնափոխութիւն*, երբ կը խօսուի կրօնքի արմատական շրջումի (լքումի) մասին, ինչպէս՝ հեթանոսութենէ քրիստոնէութիւն, քրիստոնէութենէ մահմետականութիւն: Ինչպէս ըսուեցաւ, Րաֆֆի բացառութիւն չի կազմեր. Նազարեանց⁴⁹ եւ նոյնիսկ Լէօ՝ աւելի ուշ, *կրօնք* բառին կու տան *դաւանանքի* իմաստային արժէք⁵⁰, մինչ Ոսկան⁵¹ *հաւաքը* բառը կը գործածէ:

Ասիկա՝ պատճառներէն մէկը:

Երկրորդ եւ աւելի հիմնաւոր պատճառը՝ հայ մշակոյթի մէջ Հայ Առաքելական Եկեղեցոյ կշիռն է, զոր պահպանելու եւ արմատացնելու ջանք չէ խնայուած: Ինչպէս ըսուեցաւ, ազգային եկեղեցին սահմա՞ է դէպի ազգային կրօնքի հասկացութիւնը ու պատմութիւնը կը յայտնուի այս տարողութիւնը արդարացնողի դիրքին մէջ: Ամենացայտուն արտայայտութիւնը կրօնական համայնքի գոյավիճակն է, ուր հոգեւոր պետը առանձինն կը ներկայացնէր իր հօտը պետութեան առջեւ. պատասխանատուութիւն մը, զոր իր ուսերուն դարեր շարունակ պահեց եկեղեցին: Ստիպուած, անշուշտ: Բայց կարողացաւ նաեւ:

Հետեալաբար ըմբռնելի է այն ամբողջ հոգեբանական ու ընկերային պրկումը զոր յառաջացուց դաւանափոխութեան փորձառութիւնը այսպիսի ժողովուրդի մը մէջ, որուն պատմութեան ծանրութիւնը եկեղեցին կամ կրօնքը, աւելի ճիշտը՝ Մայր Եկեղեցին, կամ Հայ Առաքելական Եկեղեցին, իր ուսերուն կը շալկէր:

Փակագիծ մը: Կը տարրուինք մտածելու, որ ԺԹ. դարու հայ լուսաւորեալ մտաւորականութիւնը ազգութիւնը կրօնքէն կամ եկեղեցիէն անջատել փորձելով նախեստառաջ ծառայութիւն մատուցած եղաւ կրօնքին, եկեղեցիին, անոր պատեհութիւն տալով, որ կարենայ վերադառնալ իր հոգեւոր իսկական առաքելութեան: Այլ հարց՝ Եկեղեցին կրցա՞ւ, ուզե՞ց օգտուիլ այս առիթէն, թե՛ ոչ: Մտաւորականութիւնը իր բարձրութեան վրայ մնաց, սակայն:

ԴԱԻԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ԺԹ. դարու հայ իրականութեան յատկանշական երեւոյթներէն մէկը եղաւ դաւանափոխութիւնը: Հայ ժողովուրդի պատմութեան մէջ, Դ. դարէն

սկսեալ, քրիստոնէութեան գաղափարախօսութիւնը պատկանած է գերազանցապէս Հայ Եկեղեցոյ տիրակալութեան. ձեռով մը անոր առանձնաշնորհումը համարուած է եւ անոր միակ մատուցարարը: Եւ ասիկա իբրեւ իրողութիւն՝ պատմութեան վրայ իր կնիքը ձգած է դարաւոր իր հնութեան իրաւունքով: Հետեաբար, Հայ Եկեղեցոյ դէմ որեւէ ծառացում դատապարտուած է իբրեւ հակաքրիստոնէական կեցուածք: Եւ քանի որ կրօնք (քրիստոնէութիւն) եւ ազգութիւն հաւաքականութեան կողմէ կ'ապրուէին իբրեւ միաձուլուած արժէքներ, Հայ Եկեղեցիէն հեռացումը նկատուեցաւ հեռացում՝ անոր քարոզած կրօնքէն, հետեաբար՝ ազգութենէն. դաւանափոխութիւնը ընկալուեցաւ իբրեւ ազգադատութիւն, նոյնացաւ կրօնափոխութեան հետ եւ հեռացուց ազգային պատկանելիութենէն: Աւելի ճիշտը՝ փորձեց հեռացնել եւ թերեւ յաջողէր, եթէ հայ մտատրականութիւնը զլանար իր գործը կատարելէն⁵²:

Նշեալ դարուն հայ եկեղեցոյ միապետութիւնը առաւելապէս ցնցուեցաւ արեւմուտքէն ժամանած կաթոլիկ եւ բողոքական միսիոնարներու քարոզչական արշաւէն, որուն հետեանքով բազմահազար հայեր լքեցին Մայր Եկեղեցին եւ յարեցան անոնց:

Ազգային ընդգծուած դիմագիծով Մայր Եկեղեցին իր փառքի դարաւոր սիւները խախտած գտաւ, երբ 1830ին հայ կաթոլիկ համայնքը, իսկ 1847ին հայ բողոքական համայնքը օսմանեան իշխանութիւններու կողմէն պաշտօնապէս ճանչցուեցան իբրեւ *միլլէթ*, այսինքն՝ պաշտօնապէս գոյութիւն ունենալու եւ գործելու իրաւունք ձեռք բերին: Իսկ երբ 1878ին, Պերլինի Վեհաժողովին, առաջին անգամ հայերը ներկայացուեցան իբրեւ ազգ եւ ոչ իբրեւ կրօնական համայնք, հայու ընկալման տեսակէտով հայերու՝ իսկ հոգեբանութեան մէջ արձանագրուեցաւ կարեւոր յառաջընթաց մը:

Վեհաժողովի 61րդ յօդուածը նախատեսած ըլլալով օսմանեան հայաբնակ գաւառներու մէջ բարենորոգումներ կատարել, թէեւ հայ քաղաքական հորիզոնի վրայ յոյս փայլատակեց, սակայն, միեւնոյն ժամանակ, մրրկեցաւ հայ ընկերային կեանքը: Բարենորոգումներու հեռանկարը հրապարակ նետեց հիմնական հարցում մը. իսկ ովքե՞ր են հայերը⁵³: Հայ դաւանափոխները՝ կաթոլիկ եւ բողոքական, այլեւ իրենք զիրենք հայ չէին համարեր: Մայր Եկեղեցոյ հաւատարիմ զաւակներն ալ կը մերժէին անոնց հայու պատկանելիութիւնը, այն տրամաբանութեամբ որ հայ նկատուելու պայմանը Հայ Առաքելական Մայր Եկեղեցոյ պատկանելիութիւնն էր⁵⁴:

Թիֆլիսէն՝ Մշակ, Մոսկուայէն՝ Հիսիսափայլ բարձրացուցին ազգութեան եւ կրօնի խնդիրը. յայտարարեցին որ բոլոր հայերը, անկախ դաւանանքէ, արեւակիցներ են, նոյն ազգի զաւակներ, նոյն պատմութեան ժառանգորդներ⁵⁵:

Ըստ Քրտուրիի, ազգային յատկանիշներ կրօնքին վերագրելը հաատ-
քի միջոցով իշխանութիւն պահելու ձեւ մըն է⁵⁶:

Այդ իշխանութիւնը կորսնցնելու վտանգին առջեւ գտնուելով, Մայր Ե-
կեղեցին դժգոհութիւն յայտնեց եկեղեցւոյ ծոցէն հեռացածներու առթիւ:
Ծայր առաւ թշնամութիւն՝ ազգի զաւակներու միջեւ: Խռովութիւն տիրեց:
Րաֆֆի այս երեւոյթը կը համարէ աղիտալի, քանի այն կը սպառնար հայ
ազգային ամբողջութեան, կը տանէր քայքայման, եւ վտանգատու էր մա-
նաւանդ քանի որ տեղի կ'ունենար ճիշտ այն ժամանակ, երբ Տաճկաս-
տանի հայութեան համար ապագայ կը պատրաստուէր (1878 Պերլին)⁵⁷,
երբ օտարներու բռնութեան դէմ մաքառելու համար հարկատու էր սէր եւ
միութիւն⁵⁸:

Դաւանափոխութեան վերաբերեալ Րաֆֆի կը մշակէ երկու տեսակէտ,
իրարու հակադիր, բայց լրացուցիչ:

Առաջինով կը զարգացնէ միսիոնարներու գործելակերպին եւ անոնց
մղումներուն, նաեւ հետետրոյններու դրդապատճառներուն մասին իր միտ-
քը: Դատապարտող եւ քննադատող կեցողածք մը կ'որդեգրէ այս համա-
բովանդակութեան մէջ, ուր Թուրքիոյ քրիստոնեայ միսիոնարները կը հա-
մարէ մեծ վտանգ եւ անելի ճարպիկ քան թուրքը, քանի որ այն կրօնափո-
խութիւնը որ թուրքը բռնութեամբ կ'ընէ, անոնք քարոզելով կ'ընեն⁵⁹: Այս-
տեղ, թուրքին պարտադրած կրօնափոխութիւնն ու միսիոնարին քարոզած
դաւանափոխութիւնը հետեւանքներու նոյն տարողութեամբ կը ներկայաց-
ուին: Րաֆֆի ցատկ կը յայտնէ, որ կրօնափոխութիւնը կը տարածուի հա-
յերուն մէջ եւ որուն պատճառները բազմաթիւ են.- մահմետականներէն
պաշտպանութիւն, տգիտութիւն, նիւթական ակնկալութիւններ, հայ կղե-
րականներէ յուսախաբութիւն, օտարներէ օգնութեան յոյսով քաղաքական
նպատակներ: Կը շեշտէ, որ համոզումով դաւանափոխ դարձողները քի-
չերն են⁶⁰: Իսկ երբ նկատի ունենանք նաեւ այն իրողութիւնը, որ բողոքա-
կան եւ կաթոլիկ քարոզիչները կը վայելեն թուրք կառավարութեան
պաշտպանութիւնը⁶¹, քանի որ ան հայութիւնը կը համարէ կրօնական հա-
մայնք ու քանդելու համար անոր միասնութիւնը զայն կը զբաղեցնէ կրօ-
նական երկպառակութիւններով, լուսաբանուած կ'ըլլանք ժամանակի հայ
ընտրանիի մտահոգութեան շուրջ:

Ասով մէկտեղ, Րաֆֆի համակիր մը չըլլալով հանդերձ դաւանափոխու-
թեան (կրօնափոխութեան՝ ինչպէս ինք կ'ըսէ) քարոզչութեան ու կիրարկ-
ման⁶², բացարձակապէս կը մերժէ քարոզել կրօնական միութիւն⁶³: Պատ-
ճա՞ռ. Եկեղեցիի անբաժան միութիւնը կը տանի միակողմանիութեան, ան-
կենդանութեան, իսկ բաժանումը՝ առանց առաջնորդող ոգիի՝ դէպի կոր-
ծանում⁶⁴: Իսկ առաջնորդող ոգին, 'իտէալը'՝ ինչպէս կը կոչէ Րաֆֆի, հա-
յութիւնն է, որուն առջեւ պէտք է խոնարհիին կրօնական բոլոր համոզում-

ները: Դաւանափոխութեան մասին Րաֆֆիի երկրորդ տեսակէտը նշեալ միտքը կը զարգացնէ:

Երկրորդ տեսակէտով ան կը մշակէ կրօնական ազատութեան գաղափարը: Կը մերժէ քարոզել կրօնական միութիւն, որովհետեւ իր դարու ոգիին անհամապատասխան կը գտնէ խիղճի ազատութեան եւ համոզումին բռնաբարութիւնը. «*Մենք մեզ թոյլ չենք տայ մեր կաթոլիկ, բողոքական, մինչեւ անգամ մահմետական եղբայրների կրօնական համոզմունքների դիպչել, միայն կ'աշխատենք զարգացնել նրանց մէջ ազգայնութեան գաղափարը*»⁶⁵:

Արեւմտեան գաղափարախօսութեան ազդեցութիւնը առանձինն անբաւարար տուեալ է բացատրելու կրօնական ազատութեան մասին Րաֆֆիի մշակած տեսութիւնը: Դէպի օտարամուտ դաւանանքները ընդլայնող անոր մտաւոր, մշակութային, կրթական զարգացման ակնկալութիւնները հիմնուած են նաեւ եւ մանաւանդ իր ժողովուրդի պատմական անցեալին եւ ներկայի փորձառութիւններուն վրայ:

Իսենթըի կերպարներէն Դուդուկչեան Րաֆֆիի խօսափողներէն է: Պոլսահայ իտէալապաշտ երիտասարդ, մահմետականութիւն ընդունած կաթոլիկ հօր մը զաակը, ստացած կաթոլիկ կրթութիւն՝ Պոլիս, ապա Մխիթարեան Միաբանութեան մօտ՝ Վենետիկ եւ Վիեննա, մեկնած Փարիզ, վերադարձած Կ. Պոլիս ու հասած Եփրատի վերին վտակներէն մէկուն ափին գտնուող հայաբնակ գիւղը՝ Օ, ուր կ'ապրի տանուտէր Խաչոյի ընտանիքը: Յեղափոխաշունչ ոճով մը կը յայտարարէ, որ մեր կղերականները քանդեցին մեր տունը, ստրկական վիճակի հասցուցին ժողովուրդը⁶⁶: Պոլիս նստած ընտրանին անտարբեր է անոր թշուառութեան նկատմամբ: Իսկ եթէ Հայաստանի մէջ կառուցուած եկեղեցիներուն եւ վանքերուն տասին դիմաց միայն մէկ դպրոց շինուած ըլլար, այժմ Հայաստանը փրկուած կ'ըլլար⁶⁷:

Վանքերուն պատճառած վնասը կրկնուող միտք է Րաֆֆիի գործերուն մէջ: (Ան վանքերը կը կոչէ *թամպալխանա՝* ծոյլերու հաւաքատեղի⁶⁸): *Ջալալէդդինի* մէջ, օրինակ, զինուորագրուած յեղափոխական, նախկին քահանայ, հիմա՝ ռուպինիուտեան աւագակ դարձած Դելի Պապան բողոքը կ'ուղղէ պապերուն, այս անգամ վանքերու փոխարէն ինքնապաշտպանութեան բերդերու ու զէնքերու բացակայութիւնը ափսոսալով. «*Եթէ դուք այս վանքերի տեղը, որոնցմով լիքն է մեր երկիրը, բերդեր չինէիք, - եթէ դուք սուրբ խաչերի եւ անօթների փոխարէն, որ սպառնցիք ձեր հարս-կուտիւնը, զէնքեր գնէիք, - եթէ դուք այդ անուշահոտութեանց տեղ, որ խնկում են մեր տաճարներում, վառօդ ծխէիք, - այժմ մեր երկիրը բախտաւոր կը լինէր*»⁶⁹:

Այստեղ է որ անգամ մը եւս (իբր կրկնուող օրինակ) Րաֆֆի ցաւով կ'ոգեկոչէ Տրդատ Գ. թագաւորի յիշատակը, որ սուրն ու թագը թողլով խաչը առաւ եւ Մանիա Այրը մտաւ ճգնելու: «Այս վանքերից ծագեց մեր երկրի կործանումը, նրանք խլեցին մեր սիրտը, քաջութիւնը...»⁷⁰:

Այս տրամաբանութեամբ, հայ կղերականներու կողմէ քրիստոնէութեան գաղափարախօսութեան սխալ մեկնաբանութիւնը եւ ուսուցումը, ժողովուրդին կողմէ անոր սխալ ըմբռնումը ու կիրարկումը ստրկամտութեան պատճառներ են: Եկեղեցականներու կողմէ ժողովուրդին քաջութիւնը սպաննուած ըլլալու միտքը կ'արտայայտուի նաեւ *Դաւիթ Բէկի մէջ*⁷¹: Մինչդեռ, «նոյն հնազանդութիւն քարոզող Յիսուս Քրիստոսը, ... ինքը առաջինը եղաւ որ բողոքեց այդ անիրաւութեան դէմ: Քրիստոնէութիւնը ազապտութեան եւ մարդկային հաւասարութեան կրօն է»⁷²:

Քրիստոնէութեան մեկնաբանութեան լուրջ հարց կը դնէ Րաֆֆի: Իր գաղափարախօսութեան տրամաբանութիւնը զարգացնող անհրաժեշտ լծակներէն մէկն է ասիկա, որ անմիջապէս առնչուած է մտաւոր յեղաշրջումի գլխատոր ազդակին՝ լուսատրութեան տարածումին:

Սալթիի յառաջաբանին մէջ Րաֆֆի յիմարութիւն կը կոչէ դաւանաբանական զանազանութեան պատճառով եղբայրներու բաժանումը, պնդելով որ կրօնքի մէջ ամէն մարդ ազատ է, «*Քայց ազգայնութեան գաղափարը մեր կեանքի գաղափարն է*»⁷³: Վէպի յեղափոխական մտքի ներկայացուցիչը կը կոչուի Արամ Աշխարունի: Նիւ Եորք աստուածաբանութիւն ուսանած քարոզիչ մըն է, հետեւաբար՝ ամերիկեան բողոքական մտքի արգասիք, որ վերադառնալով իր ծննդավայր Պարսկաստան (Ատրպատական), ուսում կը տարածէ ծրիաբար: Սալթիի եւ Ռուստամի միտքերը յեղաշրջողն է: Ակնարկելով Մայր Եկեղեցիէն տեղի ունեցած բաժանումներուն, կ'ըսէ. «*Մեր դիպատրութիւնը այն չէ այսպեղ ազգի մէջ հերժուած գցել, նոր կրօնք բաժանել եւ նրանց սէրն ու միաբանութիւնը խոռովել: ...քայց մի փոքր զոյեղով հայոց կրօնքը իւր պղտորութիւններից, մնանք դարձեալ հայ, սիրելով մեր ազգը, մեր պապութիւնը եւ մեր հայրենիքը*»⁷⁴:

Դաւանաբանական թշնամութիւնը Րաֆֆի անկրթութեան կը վերագրէ: Դաւանութեան բազմատեսակութիւնը չ'ոչնչացնէր ազգային միութիւնը: Ընդհակառակը: Խանդավառուած է Մխիթարեան Հայրերու մտաւորական գործունէութեամբ, բողոքական միսիոնարներու կրթական եռանդով: Վենետիկցիներու հետ մրցակցութիւնը զարգացուց գիրն ու գրականութիւնը, իսկ դպրոցները օգտուեցան բողոքականներու հետ մրցակցութենէն⁷⁵: Վիեննայի եւ Վենետիկի հայ արեղաներու տպագրական գործունէութիւնը ազատեց հայ հին մատենագրութիւնը Հայաստանի վանքերու մէջ փտտելէն, անոնք մշակեցին թարգմանական գրականութիւն, տարածե-

ցին ընթերցասիրութիւն, ծանօթացուցին եւրոպական գիտութիւններու հետ⁷⁶:

Դոտուկջեան՝ կաթոլիկ, իսկ Աշխարունի՝ բողոքական կրթութիւն ստացած, Դելի Պապա՝ հայ առաքելական քահանայ. ահաասիկ Րաֆֆիի վիպական կերպարներէն միջանի նմուշներ, կրողներ հեղինակի գաղափարախօսական հիմնական պատգամին, որ է լուսատրութիւն: Կրթութիւնն է այն կէտը, որուն շուրջ ազգի միասնութիւնը կրնայ կառուցուիլ: Փրկութիւնը կու գայ կրթութենէն:

ԼՈՒՍԱԴՐՈՒԹԻՒՆ

Այս շատ ընդարձակ թեմայէն, հարկադրաբար պիտի վերցնենք մեզ հետաքրքրող նիւթը միայն. լուսատրութեան ներգործօն դերը կրօնափոխութեան պատճառած մասնատումները վերածելու հոգեւոր նորոգութեան եւ մտաւոր թարմ հոսքի բացառիկ աղբիթի մը:

Լուսատրութիւնը պիտի գայ դուրսէն՝ օտարութենէն, ու ներսը՝ հայաւնայ: Կրկնութիւնը Դ. դարու քրիստոնէական օտարամուտ գաղափարախօսութեան, որ հաւատքի լոյսին հետ բերաւ եւ գիտութեան լոյսը ու դար մը ետք սկսաւ լոյսին հայացման գործընթացը գիրքրու ստեղծումով: Սամուէլի մէջ յստակ է այս ընթացքը: Մտահոգութիւնը կու գայ նոր կրօնքին հայացման ճանապարհը պատրաստող մեծ ճարտարապետին՝ Մաշտոցի բերնով. «Մենք յունական կամ ասորական կրթութեան արդիւնք ենք... ամէն ազգային զգացմունք սպաննող բիւզանդականութեան արդիւնք: Խեղճ ժողովուրդը հինը կորցրեց եւ նորի մէջ ոչինչ չգտաւ: ... Մեր ժողովրդի կրթութեան գործը բոլորովին սխալ եւ ... վնասակար հիմքերի վրայ դրուեցաւ»⁷⁷:

ԺԹ. դարուն նոյնպէս, օտարութեան մէջ ժայթքած լուսատրութեան մայր աղբիւրը դուրսէն հոսեցաւ դէպի ներս ու հոն ստացաւ հողին համն ու որակը, այսինքն՝ հայացումի ընթացքին մէջ մտաւ: Կայծերու մէջ Րաֆֆի կ'անդրադառնայ հայ ժողովուրդի պատմութեան մէջ նկատելի երեւոյթի մը. «Հայերը, սկսեալ ամենահին ժամանակներից, մի զարմանալի ընդունակութիւն ունեն, եթէ ոչ նոր կրօնքներ ստեղծելու, բայց գոնէ օտարներից ընդունած կրօնքներին ազգային գոյն ու ձեւ տալու»⁷⁸:

ՏԷՐ ԹՈՂԻԿ

Տէր Թողիկ Րաֆֆիի ստեղծած ամենայաջող տիպարներէն մէկն է: «Յայտուն ներկայացուցիչը արեղայական կրթութեան, տգիտութեան վնասին, որուն պատճառը՝ Տէր Թողիկը ամէնեփն դատապարտելի չէ սակայն, քանի որ իր պատճառած աղէտին գիտակցութենէն զուրկ է ան: Ինչ որ կ'ընէ՝ կ'ընէ համոզումով. չարիք՝ առանց չարութեան: Խաւարամտու-

թեան սահմանումն է այս, որուն դէմ ամենախիստ պայքար տարաւ Ռաֆֆիի մտատրական սերունդը:

Րաֆֆի կը յաջողի նոյնիսկ խանդաղատանք ստեղծել Տէր Թողիկի կերպարին շուրջ, այս բարի նուիրեալին, որ պարզապէս չի գիտակցիր իր անբին. «Մեր վարժապետը՝ Տէր Թողիկը չարասիրտ մարդ չէր, ընդհակառակը, շատ բարի էր, ... այս անգթութիւնները առաջ կու գային նրա մանկավարժական հասկացողութիւնից»⁷⁹:

Կայծերի կառոյցին սիւներէն մէկն է Տէր Թողիկը: Անոր անծը, անոր շուրջ, անոր նիւթը կ'ընկերակցին ամբողջ վէպի հնարապատումին ու շատ անգամ կը բացատրեն հեղինակին լուծումները: Տէր Թողիկի մանկավարժութիւնն է լարը, որ հերոսները ըմբոստութեան կ'արձակէ: Հոնկէ կը բխի ապստամբութեան ոգին: Տէր Թողիկը վայրն է բողոքի կայծերու բռնկումին:

Տէրթողիկեան մանկավարժութեան քանդումը կը կատարուի արդիական սկզբունքներով հիմնուող նոր դպրոցներու միջոցով: Անոնց հիմնադիրները ժողովուրդին ծառայելու ուխտած յեղափոխական գաղափարներով անձնատրութիւններ են: Առաջին գծի վրայ կու գայ Խրիմեան Հայրիկի տիպարը⁸⁰: Պատմական անձնատրութիւն մը, որուն կերպարին վրայ կը յամենայ Րաֆֆի իբրեւ օրինակելի կղերական, յեղափոխական միտքի դարբնոց: Խրիմեանի օրինակի կարեւորութիւնը կրկնապատիկ է, քանի որ ան ըլլալով Հայ Առաքելական Եկեղեցոյ հոգեւորական, հակապատկերն է Րաֆֆիի ամբողջ գրականութեան մէջ խստօրէն քննադատուած նոյն եկեղեցոյ կղերականութեան: Վանայ Վարազայ վանքին վանահայրը ընթերցասիրութիւն սերմանելու համար հիմնած է տպագրական մամուլ, գիտական քահանաներ պատրաստելու նպատակով՝ վարժապետանոց իր երկրագործական բաժնով, օգտակար դառնալու համար գիտացիներուն: «Հայրիկի դպրոցը աշխարհի տօթ հրաշալիքներէն մէկն էր երեսում ինձ»՝ կ'ըսուի⁸¹:

Հայրիկ իտէլական այն նմուշն է, որուն պէտք է հետեւին իր եկեղեցոյ գայթակղած կղերականները, որոնց կողմէ, սակայն, ան հալածուած է, այնպէս՝ ինչպէս հալածուեցան դարեր առաջ հայ մշակոյթի փրկարարներ՝ Խորենացին եւ Ղազար Փարպեցին, ու նոյն ճակատագրին արժանացաւ Կայծերու մէջ վիպական այլ կերպար մը՝ Ս. Առաքելոյ Վանքի վանական Համրը, հալածուելով իր դասակիցներէն: Ըստ Մ. Նահապետեանի⁸², գիտնական վանականը Նալբանդեանի վիպականացած անձնատրութիւնն է: Ի վերջոյ, անոր գրութիւնները կորուստէ փրկողը երկրագործ Կարօն կ'ըլլայ: Այս լուծումին մէջ հաւանաբար պէտք է փնտռել *Երկրագործութիւնը Իբրեւ Ուղիղ Ճանապարհ* աշխատութեան մէջ Նալբանդեանի գաղափարներուն Րաֆֆիի համամտութիւնը:

Նորարար դպրոցներ են նաեւ Աշխարունիի դպրոցը (*Սալբի*), որուն արդէն անդրադարձանք: Տէր Թողիկի դպրոցէն փախուստ տուած Կարոյի դպրոցը՝ Ռշտունեաց Գաւառի գիւղերէն մէկուն մէջ հիմնուած, ուր վարժապետ Կարօն ոչ միայն դպրոցի մէջ դասատու է, այլեւ գիւղացիներու կեանքին եւ աշխատանքին մասնակից⁸³: Ան աշակերտները զինուորական մարզանքներու եւ չարքաշ կեանքի կը վարժեցնէ⁸⁴: «Ոչ միայն մեր երախաների վարժապետն է, այլ մեր ամէնի»⁸⁵: Կարօն այն վարժապետն է, որուն՝ Րաֆֆի կը շնորհէ իսկական միսիոնարի տիտղոսը: Անոր ընթացքին մէջ Ֆարիատ կը տեսնէ անձնագրի միսիոնարի առաքելութիւն⁸⁶:

Տէրթողիկեան մանկավարժական սկզբունքներուն կատարեալ հակապատկերին նկարագրութիւնն է *խենթը*ի տեսիլքին մէջ յայտնուած դպրոցական միջավայրը, ուր գիւղին մանուկները՝ աղքիկ-տղայ մաքուր հագուած դպրոց կ'երթային, վարժապետը զիրենք չէր վախցնէր⁸⁷:

Կայծերու հերոսները՝ Ֆարիատ, Ասլան, Կարօ, Սաֆօ Տէր Թողիկի նախկին աշակերտներն են, ըմբոստներ, որոնք որսորդ Ատոյի հովանաւորութեան տակ ստացան նոր միտք եւ հոգի, անոր 'դպրոց'ին աշակերտելով յեղաշրջուեցան: Որսորդ Աօն ստրկամտութիւնը արմատախիլ ընելու համար իր ժողովուրդին մէջ գործի լծուած նախկին ազնուականն է: Ան է, որ տղաքը (Ասլան, Կարօ, Սաֆօ) ուսման համար յանձնեց ամերիկացի գիտնական Ֆիշըրի, որ զանոնք Սալմաստէն Նիւ Եորք տանելով ուսում ու կրթութիւն տուաւ անոնց⁸⁸: Գիտնական Ֆիշըր իր երկրին մէջ տուած դասախօսութիւններու ընթացքին, իր խնամքին վստահուած տղոց օրինակով ներկայացուց հայ ժողովուրդը իբրեւ յարմար եւ ընդունակ միջնորդ մը լուսատր աշխարհներու կրթութիւնը Ասիոյ մէջ տարածելու: Այս առաքելութեան համար ալ երիտասարդ սերունդին պատրաստութիւնը անհրաժեշտութիւն էր: Այս տղաքը որդեգրուեցան ամերիկացի ընտանիքներու կողմէ՝ լրման հասցնելու համար ամերիկացի գիտնականին՝ խաւարամիտ ժողովուրդներու մէջ (այս պարագային՝ հայոց) լուսատրութիւն տարածելու ծրագիրը: Հետեաբար, տղաքը ուսում ստանալով ամերիկացի բողոքականներու մօտ, վերադարձան իրենց երկիրը, լուսատրելու համար իրենց ժողովուրդը:

Նիւ Եորքի մէջ անոնց խումբին միացաւ Զալլաթ, գէթունցի հայ երիտասարդ մը, կրօնագիտութիւն ուսանելու համար ուղարկուած Զէթունի բողոքական միսիոնարներու կողմէ: Դարձաւ բողոքական քարոզիչ, պատուելի, միսիոնար: Վերադարձին, խումբին մէջ անոր գործունէութեան նպատակը եղաւ օտար միսիոնարներու գործունէութեան միջոցով ազգային արժէքներու հասցումը հարուածը կասեցնել⁸⁹: Ինք՝ բողոքական հայ պատուելի, իր համայնքին հայացումի գործընթացը պիտի յաջողցնէ, մաքրելով օտարաշունչ, պղտոր, ստրկամիտ տարրերը, որոնք կը հեռացնեն

Նոր դաւանանքը ընդունած հայերը ազգային արժէքներու գիտակցութե-
նէն: Այսպէս է որ հայերու բողոքական եկեղեցին պիտի դառնայ հայկա-
կան եկեղեցի:

Նման կերպար մըն է Արփիարը, տրապիզոնցի հայ կաթողիկ, Վենե-
տիկ՝ Մխիթարեաններու մօտ ուսանած է հայոց պատմութիւն, հայերէն,
հին ու նոր լեզուներ: Ինչպէս Զալլաթ՝ բողոքական համայնքին մէջ, այն-
պէս ալ Արփիար պիտի գործէ կաթողիկ հայ օտարացած համայնքին մէջ,
զանոնք մօտեցնելու ազգային արժէքներու գիտակցութեան:

Իսկ աւանդական եկեղեցոյ ապականած մթնոլորտին նոր շունչ ու հո-
գի պիտի բերեն ժողովուրդի լուսաւորութեան անհրաժեշտութեան նուիր-
ուած կղերականներ՝ Իսիմեաններ, Սրուանձտեանցներ⁹⁰: Լուսամիտ կղե-
րականներու նկատմամբ Բաֆֆիի համարումին օրինակներէն է պատմա-
կան վիպականացած այլ ծայն մը՝ արեղայ Յուսիկ: Խաւարամիտ կղերա-
կաններու թշնամութենէն հալածական Պատմահայր Խորենացին, իր
'կտակարան'ը ապագայ սերունդին փոխանցելու համար, զայն կը վստա-
հի միմիայն արեղայ Յուսիկի, որուն միջոցաւ 'խաւարի զաւակներէն' կը
փրկուի Խորենացիի Պապմութիւնը⁹¹:

Ազգայնականութեան գաղափարախօսութիւնը սերմանող հայ մտաւո-
րականները ազգային միութեան հիմը դարձուցին մշակոյթը, ուղարկելով
կրօնքը երկրորդական հարթակ, խղճի ազատութեան բնագաւառ, անհա-
տական համոզումի տարածք: Ընկերային եւ հաւաքական խմորումներու
հովանաւորութիւնը վստահուեցաւ մշակոյթին, կրօնքը դարձաւ անձնա-
կան հոգեմտածողութեան, ներքին մղումի արտայայտութիւն: Այսպէս, ըն-
կերային, ազգային, քաղաքական, մշակութային գետնի վրայ կրօնքի ան-
ջատողական ներգործութիւնը իր ուժը կորսնցուց:

Այս տեսակէտով յատկանշական է *Կայծերու* ամարտին Բաֆֆիի առա-
ջարկած կրթական լուծումը, ուր դաւանանքի խտրութիւնը արդէն վերա-
ցած է: Ասլան՝ *Կայծերու* հերոսներուն մտաւոր սիւնը, իր աշակերտ-սա-
նուկ Ֆարիատը Ս. Առաքելոց վանք տարաւ ուսումի: Անոր կրթութիւնը
յանձնեց մտաւորական վանական Համրին, ան, որ յանձն առած է գրել
հայոց եկեղեցական պատմութիւնը: Եթէ հիւանդ Համրը չկարողանար
ապահովել Ֆարիատի ուսումը մինչեւ վերջ, զինք պիտի փոխարինէր
Մխիթարեաններու դաստիարակութիւն ստացած կաթողիկ Արփիարը:⁹²
Ասլան, ինչպէս ինք կ'ըսէ, Ֆարիատի կը կտակէ ապագայ յառաջդիմու-
թեան սերմերը միայն, գիտութիւնը զանոնք պիտի աճեցնէ⁹³:

Յատկանշական է նաեւ *Խենթի* հերոս Վարդանի տեսիլքին մէջ
պատկերուած Հայ եկեղեցին, որ կը տարբերի ասանդական Հայ Առաքե-
լական եկեղեցիէն: Նոր եկեղեցին բողոքական ոճէն տարրեր ներմուծած
է. ոչ բեմ, ոչ զարդարուած տաճար, ոչ արծաթեայ խաչեր, ոչ թանկագին

զգեստներ, զուրկ հայկական եկեղեցիի շքեղություններ, ոչ դպիր, ոչ սարկաազ, ոչ տիրացու, միայն Քրիստոսի եւ Լուսատրիչի պատկերները հասարակ շրջանակի մէջ: Այր եւ կին միասին նստած, ձեռքերնին երգարան, կը մասնակցին արարողութեան, քահանան իր զգեստով ժողովուրդէն չի զանազանուիր եւ քարոզ կը կարդայ պարզ եւ հասկնալի լեզուով, կը բացատրէ Ս. Գիրքը⁹⁴:

Բաֆֆի կրօնքէն կակնկալէ ըլլալ լոյսի աղբիւր, կրօնական ճիւղաւորումներէն կ'ակնկալէ նորարարական թարմացում, անոնց կեդրոններէն կ'ակնկալէ ըլլալ ուսման եւ զարգացման օճախներ:

ԿՐՕՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Այս բաժնին մէջ *կրօնափոխութիւն* բառը նկատի կ'առնուի իր իմաստային բուն բովանդակութեամբ, այսինքն՝ բաժանում մէկ կրօնքէ եւ յարմար կամ պատկանելիութիւն ուրիշ կրօնքի:

Նախկին բաժնով մը արագ անդրադարձ եղաւ հայոց համաժողովրդական կրօնափոխութեան առաջին փորձառութեան, կրօնափոխութիւն դէպի քրիստոնէութիւն, որ տեղի ունեցաւ Դ. դարուն: Այստեղ, նիւթը - միշտ ըստ Բաֆֆիի - կրօնափոխութեան երկրորդ տեսակի փորձառութիւնն է՝ շրջում քրիստոնէութենէ մահմետականութիւն:

Մեր պատմական տուեալները ժուկալ են, չըսելու համար՝ խորհրդապահ, նոյնիսկ գաղտնապահ, մահմետականութիւն ընդունած հայոց մասին: Հայ եւ *քրիստոնեայ* հասկացութիւնները արհեստականօրէն եւ արուեստով նոյնացնելու դարաւոր յաջող ջանքերը մահմետականի մը հայու իրաւունքը պարզապէս կը բացառեն: Բայց գիտենք որ անոնք գոյութիւն ունեցած են:

Հայու համոզումին մէջ ազգութեան եւ քրիստոնէութեան միաձուլման բազմաթիւ պատճառներ կան հարկաւ:

Առաջին եւ թերեւս հիմնական պատճառը՝ քրիստոնէութեան ինքնապաշտպանական բացառիկ ազդակ մը հանդիսացած ըլլալն է: Շրջապատի մահմետականներէ զատորոշուելով իրեն ալլակրօն՝ քրիստոնեայ, անոնց մերձենալու եւ հաւասարելու իրաւունքին զրկանքը փրկութեան լաստ մը դարձած է ի դէմ անոնց քաղաքական, մշակութային ու կենցաղային համայնակով վտանգին:

Երկրորդ պատճառ կարելի է համարել այն, որ ԺԹ. դարուն, հայոց մէջ անելի ամրապնդուած կը գտնենք Երուսալէյն հասնելիք օգնութեան գաղափարը: Օգնութիւն՝ որ քրիստոնեայ պետութիւններէ պիտի հասնի քրիստոնեայ տառապած ժողովուրդի մը: Այս ակնկալութիւնը պահանջած է շեշտել հայոց՝ քրիստոնէութեան համար տառապած ըլլալու եւ տակաւին

տառապողի հանգամանքը, զայն ներկայացնել քրիստոնեության համար նահատակուած եւ նահատակուող ժողովուրդ:

Այսպէս, քրիստոնեութիւնը համարուած է քրիստոնեայ Արեւմուտքի հայեացքը բռնելու, ուշադրութիւնը գրաւելու լաւագոյն ազդանշան:

Երրորդ պատճառը, ըստ մեր կարծիքին, ԺԹ. դարուն տարածուիլ սկսած միտք մըն է, որուն մէջ կարեւոր ներդրում ունեցած է Բաֆֆի: Այն կը վերաբերի մահմետական 'խաւարամիտ' Արեւելքի մէջ հայ ժողովուրդի վիճակուած կարեւոր դերին: Յետագային, Ի. դարու սկիզբին, Ֆրանսայի մէջ Արշակ Զօպանեանի ջանքերով մէջտեղ բերուած ու գործի լծուած հալասէրներու կողմէ կարեւոր համարուած կէտ մը դարձաւ այս⁹⁵: Անատոլ Ֆրանսի հաստատումով՝ Հայաստանը դէպի Արեւելք կ'երկարէ լատինական հանճարը⁹⁶:

Բաֆֆի ասիական գերմանացի կը կոչէ հայը⁹⁷: Ու խօսելով Ասիոյ մէջ հայերու նշանակութեան մասին կ'ըսէ, թէ հայերուն վիճակուած է գիտութիւն եւ լուսատրութիւն տարածել արեւելքի մէջ: Քաղաքակրթութիւնը անոնց միջոցով պէտք է մուտք գործէ մահմետական Ասիա: Ան կ'ընդգծէ, որ նման միտք ծիծաղելի կրնայ թուիլ, եթէ նկատի չառնուի ամենամօտ անցեալը եւ այն դերը, որ ներկայի մէջ հայերը կը խաղան Պարսկաստանի եւ Տաճկաստանի մէջ⁹⁸:

Կայծերու մէջ, Ֆիշըր լուսաւոր աշխարհներու կրթութիւնը խաւար Ասիոյ մէջ տարածելու յարմար միջնորդ կը համարէ հայ ժողովուրդը⁹⁹: Այս կէտերը մաս կը կազմեն այն պատճառներուն, որոնք ԺԹ. դարուն եւս շարունակած են ի զօրու պահել հայու քրիստոնեական նկարագիրը ազգային յատկանիշ ներկայացնելու պնդումը:

Միւս կողմէն, դիմաւորելու համար լուսատրութեան նոր դարաշրջանը, անհրաժեշտութիւն զգացուած է ազգը կրօնքէն անջատելը, զանոնք չնոյնացնելը եւ չլիցիւնելը, պատմական հնութեամբ ամրապնդուած տեսակէտը յեղաշրջելը:

ՐԱՖՖԻ՝ ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ՀԱՅԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Մահմետական հայերու առնչութեամբ, Բաֆֆի յստակ զանազանութիւն կը դնէ պարտադրաբար եւ համոզումով կրօնափոխ հայ մահմետականներու միջեւ: Այս նիւթը ամենալայն ձեւով կը մշակէ Բաֆֆի *Դաւիթ Քէլի* մէջ:

Մահմետական հայերու երկու դասակարգ կայ այնտեղ. կամովին եւ հարկադրուած կրօնափոխներ: Երկրորդ դասակարգին համար պիտի չըսենք՝ մահմետականութիւն ընդունածներ, քանի որ այդ կերպարները մահմետականութեան քողին տակ ծածկուած կը շարունակեն մնալ քրիստոնեայ: Կը տառապին իրենց սրբութիւններուն դէմ մեղանշած ըլլալու

յանցանքով: Իրենց ուրացումին ծանր յանցանքը քաւելու նախանձախնդրութեամբ կը նետուին իրենց ժողովուրդին գաղտնօրէն օգտակար դառնալու ճիգին մէջ, ու իրենց անձին ու կեանքին հասնելիք վտանգները արհամարհելով օգուտներ կ'ապահովեն անոր, վեցիվերջոյ կը դառնան անոր իսկական փրկարարները:

Քրիստոսի գաղտնի պաշտամունքի երեւոյթը իր յստակ արտայայտութիւնը գտած է արաբական արշաւանքներու օրերէն, Թ. դարուն քանահիսուիլ սկսած հայկական դիցազնավէպի՝ *Սասնայ Շոքերու* մէջ նաեւ: Սանասար եւ Պաղտասար նորածինները իրենց մօր՝ Ծովինարի աջալուրջ հսկողութեան տակ, նախ կը մկրտուին, որմով կ'ապահովուի անոնց կրօնական (եւ ազգային) պատկանելիութիւնը, ապա հայ քահանայի մը կողմէ կը ստանան քրիստոնէական գաղտնի դաստիարակութիւն, հակառակ անոր որ կ'ապրին մահմետական միջավայրի մէջ, Պաղտատի խալիֆային պալատը:

Դաւիթ Բէկի փրկարարները մահմետականացած հայերն են՝ ներքինապետ Ահմէտ եւ Սիւրի խանում: Փոքր Դաւիթը մահէն փրկելով եւ ուղարկելով Վրաստան՝ Օրբէլեան իշխանի մօտ, անոնք ապահոված եղան իրենց ժողովուրդին ազատագրութեան յոյսը:

Պարսիկ մահմետական Ֆաթալի խանի կինն է Սիւրի, բուն անունով Մարիամ: Ան դուստրն է Տաթևի մելիք Դաւիթ Ուրացողին: Վերջինս մահմետականութիւնը կամովին ընդունածներու դասակարգին կը պատկանի, Տաթևի մելիքութեան փոխարէն վաճառած է դուստրը Ֆաթալի խանին իբրեւ կին¹⁰⁰:

Իսկ Ահմէտը զարաբաղցի հայ մըն է, մահմետականութիւն ընդունած, հարէմի ներքինապետ: Ամենայն սրբութեամբ պահած է քրիստոնէական հաւատքը, զոր կը պաշտէ գաղտնօրէն: Ան ծածկուած է Ահմէտ անունին տակ՝ պաշտպանելու իր ազգայինները Դաւիթ Ուրացողի նմաններու չարագործութիւններէն¹⁰¹:

Րաֆֆի ներքինապետ Ահմէտին կու տայ հայրենիքին ապագան մարգարէնալու պատիւը: Ան կը խոստովանի, որ տեսիլքի մէջ տեսած է պատահելիքը, այսինքն՝ Սիւնիքի ազատագրական շարժումը¹⁰²:

Մահմետական հայերու կողմէն է որ պատանի Դաւիթին յանձնուեցաւ Սիւնեաց Աշխարհի հօգօր թագաւորին թուրը, որմով ատենին ան պաշտպանած էր հայրենիքը: Անոնց կողմէն է նաեւ որ պատանի Դաւիթին յանձնարարուեցաւ յիշել հայրենիքին ցաւալի անկումը եւ անոր վերականգնումին ըլլալ նախանձախնդիր:

Անոնց միջոցով պատանի Դաւիթին փոխանցուածին մէջ մէկտեղուած են ազատագրական շարժումի մը նախապատրաստական խորհրդանիշերը՝ թագաւորական կործանած փառք, կտակուած թուր, վրէժխնդրութեան

երդում, նեցուկ (իշխան Օրբելեան), մարգարէութիւն, անձնագոհութիւն, օրհնութիւն եւ քսակ (Սիրի): Ներքինապետ Ահմէտ կը դառնայ պատանի Դաւիթին հոգեւոր հայրը, պատանի Դաւիթ 'հայր' կը կոչէ ներքինապետը. «Անոր երախտիքը իր կեանքի պահպանութեան համար երբեք մոռնալ չէր կարող»¹⁰³:

Ներքինապետն ու Սիրին մեղսակից-գործակիցներ են հայրենիքի նուիրեալ իրենց գործունէութեան մէջ: Անոնց մէջ ուժգնօրէն կ'արտայայտուի հայրենիքին եւ քրիստոնէութեան դաւաճանած ըլլալու թունալի զգացումը: Սիրին «մրածում էր, որ կորած է թէ՛ հոգով եւ թէ՛ մարմնով»¹⁰⁴: Իսկ ներքինապետը յոյս ունի որ իր Լուսաւորիչ պապը պիտի ներէ իրեն, որովհետեւ «երբեք դաւաճանած չեմ նրա եկեղեցուն», այլ պահպանած է անոր դռները՝ Ուրացողի նման գայլերէն»¹⁰⁵:

Սիրի եւ Ահմէտ կ'ոչնչացնեն Ստեփաննոս Շահումեան իշխանը վերացնելու հայ դաւաճան մելիք Ֆրանգիլի ծրագիրը: Յետագային, Շահումեանն է, որ նախարարներու ստորագրութիւնները կեղծելով նամակով վրաստանէն հրաւիրեց Դաւիթը Սիւնիքի ազատագրութեան շարժումը վարելու: Բաֆֆի խօսափողն է ան, երբ խօսքը ուղղելով մահմետական հայերու, կ'եզրակացնէ. «Դուք կապարեցիք եւ կապարում էք այն ինչ ամէն մէկ հայու պարզքն է իր հայրենիքի փրկութեան համար»¹⁰⁶:

Պարտադրաբար մահմետականացած Բաֆֆիի հերոսները դատաւորներ են նաեւ:

Ինչպէս համոզումով խորապէս քրիստոնեայ Սամուէլ չներեց իր դաւաճան հօրը, մահուան դատապարտեց, նոյնպէս ալ մահմետականացուած Սիրի չներեց հօրը, դատապարտեց, «որովհետեւ ուրացար մեր սուրբ Գրիգոր Լուսաւորիչի կրօնը», եւ ոչ ոք կրնար իրեն ներել մինչեւ ազգն ու եկեղեցին չներէին¹⁰⁷: Սակայն Սամուէլի պէս հօրը դատը անձնապէս չտեսաւ Սիրին: Ասոր փոխարէն, ատելութեան դատապարտեց Ֆաթալի խանէն ծնած իր զաւակը, այդ 'մահմետականի պարտը' վերացնելու միտքին յաճախանքը ապրեցաւ, առանց գործադրել կարենալու¹⁰⁸: Մէկուն հայրը, միւսին զաւակը, հայ ժողովուրդը իրարու զօրող հոգեկան կապերէն խզուած, արատաւոր արեւակիցներ են, անհանդուրժելի:

Դաւիթ Բէկի մէջ հայութիւնը գաղտնաբար ապրող եւ իր ազգին ծածկաբար ծառայող հետաքրքրական կերպարներէն է դերվիշը՝ հոգեւորական խորհրդատուն Ֆաթալի խանին, որ ակնածանք կը ներշնչէ մահմետական շրջապատին մէջ: Ան միաներուն պէս փախուստ չ'որոններ, բռնի կրօնափոխութեան կապանքներէն ազատելու փափաք չի յայտնէր, այլ՝ անձնագոհութեան տիպար օրինակ՝ կը մնայ իր տեղը, «գուցէ մի անգամ եւս հարկատու կը լինեմ գործին»¹⁰⁹, այսինքն՝ իր ժողովուրդին:

իր հրապարակախոսության մէջ Րաֆֆի առանց խորանալու կ'անդրադառնայ կանանց բռնի կրօնափոխութեան պարագաներուն: Եթէ տղամարդիկ կրօնափոխութեան կը դիմեն զանազան անձնական հաշիւներով՝ վախ, անօրինութիւն, պաշտպանութիւն, դիրք, կանանց կրօնափոխութիւնը կապուած է առեւանգութեան եւ բռնաբարութեան: Մահմետականները հերոսութիւն կը համարեն քրիստոնեայ կին գողնալը, մահմետական շահիլը՝ պարտականութիւն: Քրիստոնեայ կանայք անգոր որսեր են անոնց կրօնական ախորժակներուն դիմաց, կրկնապատիկ զոհեր, քանի որ եթէ մէկ կողմէն կ'ենթարկուին բռնաբարութեան նուաստացումին, միւս կողմէն՝ իբրեւ պղծուած կանայք կը մերժուին ազգին կողմէն. անելի ծանր նուաստացում¹⁰: Սակայն Րաֆֆի երկար չի յամենար այս նիւթին վրայ:

Հայ մահմետականներու միւս դասակարգը կամովին կրօնափոխներն են: *Դաւիթ Բէկի* մէջ երկու պատմական կերպարներ՝ *Դաւիթ Ուրացող* եւ *Երիցվանիկ* ասանի մելիք Ֆրանգիւ կրօնափոխ հայեր են, մահմետականութիւն ընդունած: Երկուքն ալ կը ներկայացուին իբրեւ հայրենիքի դաւաճաններ: *Դաւիթ Ուրացողը* հեղինակին կողմէ կը կոչուի երկրորդ Վասակ¹¹, նոր Վասակ¹²: Կրօնափոխութեան իրենց նպատակը փառասիրութիւնն է, որուն պատճառով ոչ միայն կը դաւաճանեն իրենց արմատներուն, այլեւ գործիք կը դառնան թշնամիին ձեռքը՝ աներելու հայրենիքը եւ վնասելու իրենց արեւակիցներուն, ընդ որում նաեւ զաւակին: Մելիք *Դաւիթ* կնութեան ծախած է իր դուստրը Ֆաթայի խանին, ստանալու համար Տաթեւի մելիքութիւնը, իսկ մելիք Ֆրանգիւ խեղդել տալ կը ջանայ Գենուազ Գաւառի ժառանգորդ, գերեվարուած իշխան Շահումեանը, տիրանալու համար անոր կալուածին: Իրենց նպատակին հասնելու համար գրգռութիւններ կը հրահրեն: «*Ոչ որ այնքան չէ վնասել հայոց հայրենիքին, որքան մեր արինակից դաւաճանները*», կը գրէ Րաֆֆի¹³. անոնք թշնամիէ անելի մեծ չարիք են ազգին գլխուն:

Րաֆֆի 'Անքնական գլուխ' կը կոչէ Ուրացող *Դաւիթը*, քանի որ քնական չի նկատեր հայ մը՝ պարսիկի (իմա՝ մահմետական - Ն.Պ.) հոգիով, պարսիկի սրտով: Այդպիսի հայը, մերժելի է ժողովուրդին կողմէ¹⁴, անընդունելի, վանելի, վիժուածք: Մահմետականը եւ հայու հոգին չեն համապատասխաններ իրարու: Անքնականութեան այս միտքը անելի յստակութիւն կը ստանայ այլ կերպարի մը՝ խանի ծերունի վեզիրին միջոցով: Մահմետականութիւն ընդունած կրօնափոխ մը, ծագումով հայ, բայց ոչ եւս, քանի որ իր համոզումով մահմետականներու մէջ ազգ չկայ, ամբողջ իսլամը մէկ ժողովուրդ կը կազմէ: Մահմետականութիւնը ազգութեան հասար է: Այդ կերպարին միջոցով Րաֆֆի իր տեսակէտը կը յայտնէ այս դասակարգի կրօնափոխներու մասին, եւ այսպիսով կը փակուի համոզումած մահմետականներու եւ ազգի առնչութեան հարցը: Առնչութիւն չկայ,

ըստ Րաֆֆիի: Համոզուած մահմետականը հայութենէ ընդմիշտ կը հեռանայ: Հայ ազգը չի կրնար գոյատեւել ու զարգանալ մահմետական կրօնքին մէջ:

Եթէ պարտադրաբար մահմետականացած ու իրենց հայութիւնը ծածկած մարդիկ կը տառապին կեղծիքին մէջ ու առիթ չեն փախցնել իրենց կողմէ դաւաճանուած ազգին օգուտ բերելու մէջ ինքզինքնին գերազանցելու, համոզուած կրօնափոխները ոչ միայն օգուտ չունին, այլեւ թշնամիէն անելի վնասակար են ազգին: Մելիք Դաւիթ «*Վրանջում էր հայերին անելի քան մի թուրք կամ պարսիկ կամ մի այլ մահմետական*»¹¹⁵:

ՈՉ ՄԻԱՅՆ ՄԱՀՄԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Րաֆֆիի այս տեսակէտը չի վերաբերիր միայն մահմետականութիւն ընդունածներուն, այլ պատմութեան տազնապալի ժամանակին թշնամիին կրօնքը որդեգրած հայերուն: Իր *Սամուէլով* ան կը վերակենդանացնէ Դ. դարու հայ-պարսիկ սրած յարաբերութիւններու ընթացքին դէպի կրակապաշտութիւն կրօնափոխ եղած պատմական երկու անձնատրութիւններու՝ Վահան Մամիկոնեանի եւ Մերուժան Արծրունիի կերպարները: Ընդունելով պարսից կրօնը, դարձած են թշնամիի ձեռքին յարմար զէնք՝ ոչնչացնելու ամէն ինչ որ սուրբ է եւ նուիրական Հայաստանի մէջ¹¹⁶:

ԵՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Կրօնական օտարամուտ հոսանքները, թէ՛ քրիստոնէութիւնը, թէ՛ ԺԹ. դարու դաւանանքները, որոնք կրօնափոխութեան տազնապալը ստեղծեցին հայ ժողովուրդին մէջ, դուրսէն մտան իբրեւ օտար, որդեգրուեցան իբրեւ հիւրընկալուած, ու մնացին երբ հայացումի ենթարկուելով դարձան հարազատ: Այս երեւոյթը կը ներկայացնէ Րաֆֆի թէ՛ վիպային իր լուծումներով, թէ՛ իր վէպերուն մէջ կատարած պատմական ուսումնասիրութիւններու շեղումներով եւ թէ՛ իր հրապարակախօսական յօդուածներով: Սակայն, երբ կրօնափոխութիւնը տեղի կ'ունենայ թշնամիի կրօնքին ուղղութեամբ, պարսիկ կրակապաշտութիւն կամ մահմետականութիւն, անոնց հայացումի կարելիութեան չ'ակնարկեր Րաֆֆի: Մի՞թէ կարելի չէ ըլլալ կրակապաշտ հայ, կամ մահմետական հայ: Այս հարցը չի տրուիր. ընդհակառակը, զանոնք կրող հայ կերպարները կը ներկայացուին իբրեւ իրենց ժողովուրդի շահերուն դէմ աշխատողներ, այն աստիճան, որ որդին կ'որոշէ վերացնել հայրը իբրեւ վնասակար արատ, մայրը կը մտածէ ոչնչացնել մանուկ որդին իբրեւ ապագայ արատ իր ազգին:

Օգտակար կրօնքը եւ դաւանանքը կը հայանան, վնասակարները կ'օտարացնեն: Այս է Րաֆֆիի պատգամը: Ամէն նորամուտ երեւոյթ ընդու-

նելի է, եթէ պիտի նպաստէ ազգի յառաջդիմութեան ու ազգային արժէքներու վերանորոգման:

Իրեն համար ազգին օգուտին նուիրուած հայը, անկախ իր կրօնքէն, կրօնական համոզումէն, առանց այլեւայլի՝ հայ մըն է: «*Կաթողիկոսութիւնը, բողոքականութիւնը, եւ մինչեւ անգամ մահմետականութիւնը չեն զրկում հային հայ լինելուց: Եւ ոչ էլ լուսատրչականութիւնը մեզ իրաւունք է տալիս հայ կոչուել: Մենք հայ էինք երբ հեթանոս էինք, եւ հայ կը մնանք երբ հազար անգամ կը փոխենք մեր կրօնը*»¹⁷: Այսպիսի հաստատում մը, ազգութեան գաղափարի դիմաց հաւասար արժէքներով կը ներկայացնէ թէ՛ քրիստոնէական դաւանանքները, թէ՛ այլակրօն մահմետականութիւնն ու հեթանոսութիւնը: Կրօնական որեւէ հակում, որուն առնչուած է հայ ժողովուրդը անցեալին, կ'առնչուի ներկային եւ կրնայ առնչուիլ ապագային, պիտի չգերակշռէ ազգային զգացումները, հետեւապէս եւ պատկանելիութիւնը, պայմանաւ որ ազգային տարրը բարձր արժէքներու գիտակցութեամբ իր արժանի տեղը գրաւած ըլլայ ժողովուրդի հաւաքական կեանքին մէջ ու արարուի մշակոյթի միջոցով:

Մէկ խօսքով, եթէ անցած ըլլայ հայացումի բովէն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Րաֆֆի, բուն անունով Յակոբ Մելիք Յակոբեան (Սալմաստ, 1835--Թիֆլիս, 1888): Կը համարուի հայ ազգային-ազատագրական շարժման վիպասանութեան նահապետ:

² Մ. Նահապետեան, «Րաֆֆու 'Կայծեր' Վէպը»՝ Րաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս Հարորով, Հոր. 5*, Երեւան, Հայպետհրատ, 1956, էջ 508:

³ Րաֆֆի, «Հայկունու Կրիտիկան եւ 'Կայծեր'ը», Րաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս Հարորով, Հոր. 10*, Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 88. նաեւ՝ *Մշակ*, 1883, թիւեր 141-50:

⁴ Վահան Մամիկոնեանի որդին, եւ Մերութան Արծրունիի քեռորդին: Երկուքն ալ պարսկամէտ:

⁵ Պարսիկ թագաւոր Շապուհ Բ.ի կողմէ նահատակուած սպարապետ Վասակ Մամիկոնեանի որդին:

⁶ Րաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս Հարորով, Հոր. 7*, Երեւան, Հայպետհրատ, 1963, էջ 72:

⁷ Նոյն, էջ 71-2:

⁸ Նոյն, էջ 60:

⁹ 2004ին Թուրքիա լոյս տեսած Ֆեթիհէ Չեթինի *Մեծ Մայրս* յուշագրական վիպակը լրագոյն վկայութիւններէն մէկն է ասոր:

¹⁰ «Այժմ ներկայանում էր մի նոր կրօնական պայքերագը: Արդեօք ինչպէ՞ս կը մասնակցէր այդ պայքերագմին ժողովուրդը, որ փակափն մնացել էր իւր հին,

աւանդական նախապաշարմունքների մէջ», Բաֆֆի, Երկերի ժողովածու Տաս, Հտր. 7, էջ 72:

¹¹ Նոյն, էջ 81:

¹² Նոյն, էջ 485:

¹³ Բաֆֆի, Երկերի ժողովածու Տաս Հապորով, Հտր. 1, Երեւան, Հայպետհրատ, 1962, էջ 133:

¹⁴ Նոյն, էջ 346:

¹⁵ Բաֆֆի, Երկերի ժողովածու Տաս Հապորով, Հտր. 6, Երեւան, Հայպետհրատ, 1963, էջ 37, 303:

¹⁶ Բաֆֆի, Երկերի ժողովածու Տաս Հապորով, Հտր. 3, Երեւան, Հայպետհրատ, 1962, էջ 306:

¹⁷ Բաֆֆի, Երկերի ժողովածու Տաս, Հտր. 6, էջ 279:

¹⁸ Բաֆֆի, Երկերի ժողովածու Տաս, Հտր. 5, էջ 75-6:

¹⁹ Բաֆֆի, Երկերի ժողովածու Տաս, Հտր. 1, 'Յառաջարան', էջ 65:

²⁰ Մ. Նահապետեան, «Բաֆֆու 'Կայծեր' Վէպը» Բաֆֆի, Երկերի ժողովածու Տաս, Հտր. 5, էջ 509:

²¹ Nation-nationalisme-nationaliste - եզրերը կը թարգմանենք յաջորդաբար՝ ազգ - ազգութիւն/ազգայնութիւն - ազգայնական/ազգայնականութիւն: Բոլոր թարգմանութիւնները կատարուած են յօդուածագիրին կողմէ:

²² "Nationalism is the product of European thought in the last 150 years," Elie Kedourie, *Nationalism*, Մեծն Բրիտանիա, Բ. տիպ, 1986, էջ 74:

²³ "Nationalism is itself a doctrine of national self-determination"՝ նոյն, էջ 31:

²⁴ "Les nations sont quelque chose d'assez nouveau dans l'histoire. L'antiquité ne les connut pas... Le XVIII^e siècle avait changé toute chose. L'homme était revenu, après des siècles d'abaissements, à l'esprit antique, au respect de lui-même, à l'idée de ses droits. Les mots de patrie et de citoyen avaient repris leur sens. ... La religion est devenue chose individuelle, la conscience de chacun," Ernest Renan, *La Nation, Qu'est-ce Qu'une Nation?* Conférence à la Sorbonne, Paris, 11 Մարտ 1882, թուայնացած տարբերակ, էջ 2-7-13
<http://www.lexilogos.com/document/renan/nation.htm> :

²⁵ "Une nation est une âme, un principe spirituel. Deux choses qui, à vrai dire, n'en font qu'une constituent cette âme, ce principe spirituel. L'une est dans le passé, l'autre dans le présent. L'une est la possession en commun d'un riche legs de souvenirs; l'autre est le consentement actuel, le désir de vivre ensemble, la volonté de continuer à faire valoir l'héritage qu'on a reçu indivis," նոյն, էջ 14:

²⁶ Ստեփաննոս Նազարեանց (1814—1879), հրատարակիչ Հիսիսափայլ (1858-64) ամսագրի, Մոսկուա, ԺԹ. դարու հայ վերածննդեան շարժումի ռահվիրայ:

²⁷ Միքայէլ Նալբանդեան (1829—1866), ծնած է Նոր Նախիջեւան, քանաստեղծ, հրապարակագիր, ԺԹ. դարու հայ ազատագրական շարժումի գաղափարախօս: Հիսիսափայլի աշխատակից:

²⁸ Գրիգոր Արծրունի (1845—1892), ծնած է Մոսկուա, հրատարակիչ Թիֆլիսի Մշակ (1872—1921) թերթի, լոյս տեսած է տարբեր յաճախականութեամբ:

²⁹ «Ազգ ու կրօնը ջոկ ջոկ խնդիրներ են, այլ է ազգայնության հանդէսը եւ այլ է կրօնի հանդէսը. մինը աշխարհական խորհուրդ ունի, միւրը իբրեւ գերաշխարհիկ քան, իբրեւ անմարմին ըմբռնողութիւն, գործ ունի ուղղակի մարդոյս խղճի եւ Աստուծոյ հետ: ...Կրօնով հայերը կարող են լինել որոշ, եւ ոչ մինը չունի իշխանութիւն բռնաբարել միայն խիղճը...», Նազարեանց, «Մեղեքսոս, Լեւսինգ եւ Լաւատեր, Վիճաբանելով Կրօնի Վերայ», *Հիսախայի*, 1860, թիւ 10:

³⁰ «Nazariantz a différencié la nation de la religion; et a lié la nationalité à la culture; il a passé d'une arménité religieuse à une arménité culturelle» (Hrant Adjemian, *Khatchadour Abovian et la Renaissance Littéraire en Arménie Orientale*, Անթիլիաս, 1986, էջ 147:

³¹ «Պաշտպանել այն հայի առաքելութիւնը կոխունքը իրատունքը է մեր կեանքի բուն խորհուրդը եւ նպատակը: Եւ այս նպատակին հասնելու համար չէ պիտոյ ընկրկիք ոչ քանտի եւ ոչ աքսորի առջեւ, ոչ միայն քանի եւ գրչով, այլեւ զէնքով եւ արիւնով, եթէ մի օր արժանի լինիք զէնք առնուլ մեր ծեռքը եւ մինչեւ այժմ քարոզած ազատութիւնը նստիլ եւ սրբել մեր արիւնով: Ահաւասիկ մեր դաւանութիւնը, որի մէջ տեսնում ենք ազգի փրկութիւնը» (Մ. Նալբանդեան, «Երկու Տոդ», *Մեղու*, 1861, թիւ 133:

³² Ստեփան Ոսկան, խմբագիր եւ հրատարակիչ Փարիզ հրատարակում *Արեւելք* (1855–56), *Արեւմուտք*, (1859–60, 1864–65) կիսամսեայ հանդէսներու, *La Réforme* (1867–1901) թերթի:

³³ «Հայրենիքի սէրը վերագոյն զգայութիւններու կարգը կը դասենք. քայք պատիւը իրեն զոհել, ազատութիւնը ոտքի տակ առնուլ անկարելի է մեզ: ...'Խայտառակ' հայրենասիրութեան վրայ վստահութիւն չունիք քնաւ, ու նաեւ հայրենիքի համար թույլ մը խայտառակ ըլլալ յանձն չենք առնուր: Մեր հայութիւնը եւ մարդկութիւնը միասիրտ կ'ապրին եւ կը շարժին երկրի վրայ...» (Լէօ, «Գրական Կորուստներեան, Ստեփան Ոսկան», *Մուրճ*, 1901, թիւ 12, էջ 156:

³⁴ Արծրունի, «Երեկ, Այսօր եւ Էջուց», *Մշակ*, 1872, Ա. տարի, Յունուար 1, թիւ 1:

³⁵ «Մեզ թում է, թէ մօտ է այն բարեբախտ ժամանակը, երբ ազգայնութեան խնդիրը կ'ընդունէ իւր վճռական լուծումը, եւ ազատութիւնը, արդար օրէնքը ու իրատունքը, որ կրօնքները չկարողացան աշխարհ բերել, պիտի ներս մտնեն մարդկային կեանքի մէջ քաղաքակրթութեան ու լուսատրութեան ծնուլ», Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հոր. 1*, 'Յառաջաբան', էջ 68:

³⁶ «...Տաճկաստանի հայերի վերածնութեան հարցը գրաւում է մեր ամէնի ուշադրութիւնը, մեր մէջ գտնում են մարդիկ, որ սկսում են կրկին քրքշել մարած մոխիրը ...յայտնելով այն հնացած, եւ լուսատր ազգերի համար իր նշանակութիւնը կորցրած միտքը, թէ կրօնը, այսինքն՝ եկեղեցին պէտք է ճանաչել ազգութեան հիմք...», «Ինչո՞ւ ենք Մխիթարում», Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս Հարորդ, Հոր. 9*, Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 499. նաեւ՝ *Մշակ*, 1879, թիւ 226:

³⁷ «Կրօնը որպէս մարդկային զգացմունքի արտայայտութիւն, ժամանակների հետ միշտ փոխուել է եւ անվերջ կերպով կը փոխուի: ...Ուրեմն, մի քան որ

- տետողական չէ, որ միշտ հեղուկ վիճակի մէջ է գտնուում, որ զգացմունքից միայն կախում ունի, նա չէ կարող ազգութեան հաստատ հիմք լինել», նոյն, էջ 500:
- ³⁸ «Լեզու, հայրենիք, եկեղեցի, ցեղական առանձնութիւններ,- ահա այն գլխատու հիմունքները, որոնցով, հաւատացած ենք, կը պահպանուի մեր ազգութիւնը», «Մինչեւ Ե՛րբ», Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 10*, էջ 32. նաեւ՝ *Մշակ*, 1880, թիւ 121:
- ³⁹ «Մենք միշտ ասել ենք եւ դարձեալ կը կրկնենք, որ ազգութեան գաղափարը պայմանատուում է ոչ թէ կրօնով, այլ նրա ցեղական յատկութիւններով, որոնց մէջ առաջին տեղը բռնում է լեզուն, որ է եւ միշտ կը լինի ազգի պահպանութեան հիմքը», Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 9*, էջ 501, նաեւ՝ *Մշակ*, 1879, թիւ 226::
- ⁴⁰ «Մինչեւ Ե՛րբ», Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 10*, էջ 29, նաեւ՝ *Մշակ*, 1880, թիւ 121:
- ⁴¹ «Նա (Սամուէլի մայրը - Ն.Պ.) գիտէր Սամուէլի ամուր հաւատը, գիտէր նրա կրօնական ջերմեռանդութիւնը, նրան ծանօթ էին իւր որդու հայրենասիրական ջերմ զգացմունքները», Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 7*, էջ 40:
- ⁴² «Նա (Վահան Մամիկոնեան՝ Սամուէլի հայրը - Ն.Պ.) գալիս է ձեռք-ձեռքի տուած Մերութանի հետ ...Թագատրութիւնը սպանեցին, այժմ պէտք է սպանեն ազգութիւնը, կրօնը...Մենք այսուհետեւ պէտք է պարսկերէն խօսենք եւ պարսկերէն աղօթենք...», նոյն, էջ 30:
- ⁴³ «Ազգը, հայրենիքը, եկեղեցին կանչում են քեզ», Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 6*, էջ 129:
- ⁴⁴ Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 6*, էջ 95
- ⁴⁵ Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 1*, 'Յառաջաբան', էջ 70
- ⁴⁶ «Մինչեւ Ե՛րբ», Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 10*, էջ 34. նաեւ՝ *Մշակ*, 1880, թիւ 121:
- ⁴⁷ Նոյն:
- ⁴⁸ Նոյն, էջ 32:
- ⁴⁹ Ստեփանոս Նազարեանց (1814–1879), հրատարակիչ *Հիսիսափայլ* (1858–64) ամսագրի:
- ⁵⁰ Ա.- Լուսէրի բարենորոգումներուն ակնարկելով գերմանական ազգի միութեան մասին Նազարեանց կը գրէ. «Մեր օրերումս կաթոլիկութեան եւ բրոթետանտեան կրօնը չեն խափան նոցա հայրենասիրութեանը», Նազարեանց, «Մենեյսլոզն, Լեսսինգ եւ Լաատեր, Վիճաբանելով Կրօնի Վերայ», *Հիսիսափայլ*, 1860, թիւ 10:
- Բ.- «Ստեփան Ոսկանը չէր կարողանում հաշտուել մանաւանդ կրօնափոխութեան հետ, երբ այդ բանը ներքին համոզմունքից բոլորով մի գործողութիւն չէր ...: Հենց այդ պատճառով Ոսկանը այնքան հարուածներ էր թափում Գարրիէլ Ալվազովսկու վրայ, որ փոխեց կրօնը այն ժամանակ, երբ այլ եւս անկարելի էր մնալ կաթոլիկ եկեղեցու ծոցում» (Լէօ, «Գրական Կորուստներեան, Ստեփան Ոսկան», *Մուրճ*, 1901, թիւ 12, էջ 152:

- ⁵¹ Տիարպեքիի մէջ զանգուածային կրօնափոխութեան դէպքի մը առթիւ հետեւեալը կը գրէ Ոսկան. «Կատակելի է ժողովուրդը, երբ կ'երեւակայէ թէ գտնուիմը բաական առիթ է հաւատք փոխելու...» (Ստ. Ոսկան, «Մոյի եռանդ», *Արեւմուտք*, 1859, թիւ 6, էջ 47:
- ⁵² Այս առումով փայլուն օրինակներէն մէկն է հայ կաթոլիկ բանաստեղծ Մկրտիչ Պէշկիթաշեանի (1828–1868, Կ. Պոլիս) գրական ու մանկավարժական գործունեութիւնը. ան ոգի ի բռին պայքարեցաւ վերացնելու հայոց մէջ տարածուող դաւանաբանական թշնամութիւնները:
- ⁵³ «Մինչեւ Ե՛րբ», Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 10*, էջ 33. նաեւ՝ *Մշակ*, 1880, թիւ 121:
- ⁵⁴ «Հայ-կաթոլիկը, հայ-բողոքականը իրան հայ չէ համարում: Հայ լուսաւորչականը նոյնպէս նրանց հայ չէ անուանում», Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 5*, էջ 399:
- ⁵⁵ «...ի՛նչ իրատեք ունի մի այլապէս հաւատացող քրիստոնեայ հայ հալածել եւ թշնամել մի այլապէս հաւատացող քրիստոնեայ հայ: Քրիստոնէութիւնը ազգի վերայ չէ, ազգ ու կրօնը ջոկ ջոկ խնդիրներ են Ուրեմն Հայերը թէ Լուսաւորչականք, թէ Կաթոլիկք եւ թէ Պրօտեստանք, մնում են միշտ արեւնակից եղբարք, մի ազգի որդիք, մի լեզուի կցորդք, մի ազգային պատմութեան (այսինքն մի եւ նոյն նախահարց եւ նախամարց) ժառանգներ», Նազարեանց, «Մենդելսոնը, Լեսսինգ եւ Լաւատեր, Վիճաբանելով Կրօնի Վերայ», *Հիստորիայ*, 1860, թիւ 10:
- ⁵⁶ «The transformation of religion into nationalist ideology is convenient for nationalists who, for centuries, utilized the faith to hold the power,” Elie Kedourie, էջ 75:
- ⁵⁷ «Կրօնի երկպառակութիւնների խնդիրը մէջ գցել ուղիղ այն ժամանակ, երբ Տաճկաստանում պատրաստում է հայերի համար մի ապագայ - դա եղեռնագործութիւնից անելի մեծ յանցանք է», «Ինչո՞ւ ենք Մխիթարում», Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 9*, էջ 502. նաեւ՝ *Մշակ*, 1879, թիւ 226:
- ⁵⁸ «... անկարելի էր, որ մտածող անձինքների ուշադրութիւնը չգրաւէր այդ աղէտատու երեւոյթը, որ սպառնում էր հայոց ազգային ամբողջութեան քայքայմանը, մանաւանդ մի այնպիսի ժամանակում, երբ օտարների բռնութեան դէմ մաքառելու համար հարկաւոր էր ընդհանուր միաբանութիւն, հարկաւոր էր միութիւն եւ սէր», Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 5*, էջ 178:
- ⁵⁹ «Բայց Թուրքիայում կայ մի անելի սաստիկ վտանգ հայոց եկեղեցուն քրիստոնեայ միսիոնարներից, որոնք անելի ճարպիկ են, քան մահմետականները, որոնք քարոզներով են կրօնափոխ անում, իսկ թուրքը բռնութեամբ» (Բաֆֆի, «Ի՛նչ Վերանորոգութիւններ Պէտք են Տաճկական Հայաստանին», Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 9*, էջ 313. նաեւ՝ *Մշակ*, 1878, թիւ 162-3:
- ⁶⁰ «... իսկ խիստ սակաւները, ճշմարիտ համոզումով, թողնում էին հայոց եկեղեցին եւ մտնում բողոքական եւ կաթոլիկ եկեղեցու գիրկը», Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 5*, էջ 177:

- ⁶¹ «Թուրքիան այդ հրեշներին (ժեզուիթներ - Ն.Պ.) ասպնջականության է տալիս իր երկրում: Բողոքական քարոզիչները մեծ պաշտպանություն են վայելում թուրք կառավարության կողմից» (Նոյն, էջ 399):
- ⁶² «Կրոնափոխության քարոզելը խիստ հեռու է վեպի հեղինակից...», Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 1, 'Յառաջաբան'*, էջ 70
- ⁶³ «Մեք հեռու եմք այն նպատակից, որ կրկին քարոզեմք կրոնական միության ...», Բաֆֆի, «Նամակ Կ. Պոլսից», Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 9*, էջ 49. նաեւ՝ *Մշակ*, 1873, թիւ 14:
- ⁶⁴ Բաֆֆի, «ԻՆչ Կապ Կայ Մեր եւ Տաճկաստանի Հայերի Մէջ», *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 9*, էջ 477. նաեւ՝ *Մշակ*, 1879, թիւ 123:
- ⁶⁵ Բաֆֆի, «Հայերը Քապուլի Մէջ», *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 10*, էջ 26. նաեւ՝ *Մշակ*, 1880 Յունիս 17:
- ⁶⁶ Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 3*, էջ 172:
- ⁶⁷ Նոյն, էջ 192:
- ⁶⁸ Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 1*, էջ 83:
- ⁶⁹ Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 3*, էջ 56:
- ⁷⁰ Նոյն, էջ 57
- ⁷¹ «Դրանք (մեր եկեղեցականները - Ն.Պ.) թուլացրին ժողովրդի սիրտը, խլեցին նրա քաջութիւնը, մեղորին նրա բոլոր կենսական ուժերը, եւ քրիստոնէական խոնարհութեան, քրիստոնէական համբերութեան անունով սովորեցրին նրան ստրուկ լինել» Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 6*, էջ 283:
- ⁷² Նոյն, էջ 284:
- ⁷³ Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 1, 'Յառաջաբան'*, էջ 70:
- ⁷⁴ Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 1*, էջ 364:
- ⁷⁵ Տես ծանօթ 64, էջ 478:
- ⁷⁶ Բաֆֆի, «Շեղիւնակների Վիճակը», *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 9*, էջ 86. նաեւ՝ *Մշակ*, 1874, թիւ 48:
- ⁷⁷ Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 7*, էջ 76-7
- ⁷⁸ Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 5*, էջ 414:
- ⁷⁹ Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 4*, Երեւան, 1963, էջ 252:
- ⁸⁰ Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 5*, էջ 187:
- ⁸¹ Նոյն, էջ 196:
- ⁸² Մ. Նահապետեան, «Բաֆֆու 'Կայծեր' Վեպը՝ Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 5*, էջ 520:
- ⁸³ Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 5*, էջ 347:
- ⁸⁴ Նոյն, էջ 348:
- ⁸⁵ Նոյն, էջ 346:
- ⁸⁶ Նոյն, էջ 367:
- ⁸⁷ «Տղայ եւ աղջիկ, խառն միմեանց հետ, գրքերը ուսերնին շալակած, շտապով դիմում էին դպրոց: ...որքան ուրախ էին նրանք: Երեւի, դպրոցը եւ վարժապետը չեն վախեցնում նրանց», Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 3*, էջ 353:
- ⁸⁸ Բաֆֆի, *Երկերի ժողովածու Տաս, Հտր. 5*, էջ 443:

- ⁸⁹ «...ասաց Զալլադը,- Բայց միսիոնարները այստեղ գալով, ձեր երկրային ստրկության վրայ անելացնում են եւ հոգեւոր ստրկութիւնը. ձեզ անջատում են աշխարհից, անջատում են համազգի եղբայրներից եւ դարձնում են անտարանի գերիներ, թէւ սուրբ անտարանը ազատութեան եւ եղբայրութեան կտակարանն է», Նոյն, էջ 397:
- ⁹⁰ Գարեգին Եպս. Սրոանծտեանց (1840–1892), ծնած Վան, Խրիմեան Հայրիկի աշակերտ, բանաստեղծ, բանահաւաք:
- ⁹¹ Րաֆֆի, *Երկերի ժողովածու Ssu, Հտր. 4*, էջ 204:
- ⁹² Րաֆֆի, *Երկերի ժողովածու Ssu, Հտր. 5*, էջ 463,469:
- ⁹³ «Ես ձգեցի քո մէջ ապագայ յառաջդիմութեան սերմերը միայն: Իսկ գիտութեան լոյսը կը ծլեցնէ, կ'աճեցնէ եւ պտղաբեր կը կացուցանէ նրանց», Նոյն, էջ 457:
- ⁹⁴ Րաֆֆի, *Երկերի ժողովածու Ssu, Հտր. 3*, էջ 354:
- ⁹⁵ Edmond Khayadjian, *Archag Tchobanian et le Mouvement Arménophile en France*, Publication CNDP (Centre National de Documentation Pédagogique), Մարսէյ, 1986:
- ⁹⁶ «L'Arménie prolonge en Orient le génie latin», Նոյն, էջ 207:
- ⁹⁷ Րաֆֆի, «Հայ Երիտասարդութիւնը», *Երկերի ժողովածու Ssu, Հտր. 9*, էջ 436. Նաեւ՝ *Մշակ*, 1879, թիւ 202:
- ⁹⁸ Րաֆֆի, «Նամակ Դաւիթից», *Երկերի ժողովածու Ssu, Հտր. 9*, էջ 120. Նաեւ՝ *Մշակ*, 1875, թիւ 30:
- ⁹⁹ Րաֆֆի, *Երկերի ժողովածու Ssu, Հտր. 5*, էջ 444:
- ¹⁰⁰ «Հայրը ծախսեց Մարիամին Տաթևի մելիքութիւնը ստանալու համար, եւ թողնելով քրիստոնէական կրօնը, ինքը Նոյնպէս ընդունեց մահմետականութիւն. այդ պատճառով հայերից ստացաւ 'ուրացող' անունը եւ Տաթևի համար դարձաւ մի երկրորդ Վասակ, իսկ ինքը իրան թուրքի անունով Բադր էր կոչում», Րաֆֆի, *Երկերի ժողովածու Ssu, Հտր. 6*, էջ 37:
- ¹⁰¹ Նոյն, էջ 96:
- ¹⁰² Նոյն, էջ 124:
- ¹⁰³ Նոյն, էջ 122:
- ¹⁰⁴ Նոյն, էջ 37:
- ¹⁰⁵ Նոյն, էջ 96:
- ¹⁰⁶ Նոյն, էջ 543:
- ¹⁰⁷ Նոյն, էջ 95:
- ¹⁰⁸ Նոյն, էջ 38:
- ¹⁰⁹ Նոյն, էջ 546:
- ¹¹⁰ Րաֆֆի, «Տեղեկագիրք Գաառական Հարստահարութեանց», *Երկերի ժողովածու Ssu, Հտր. 9*, էջ 240. Նաեւ՝ *Մշակ*, 1878, թիւ 147:
- ¹¹¹ Րաֆֆի, *Երկերի ժողովածու Ssu, Հտր. 6*, էջ 37:
- ¹¹² Նոյն, էջ 303:
- ¹¹³ Նոյն, էջ 475:
- ¹¹⁴ «Դուք անքնական գլուխ էիք, մելիք, հայ՝ պարսիկի հոգով, պարսիկի սրտով: Այս պատճառով էլ ժողովուրդը մերժեց ձեզ», Նոյն, էջ 321-2:
- ¹¹⁵ Նոյն, էջ 54:

¹¹⁶ «Երկուան էլ ուրացել էին քրիստոնէութիւնը, երկուան էլ ընդունել էին պարսից կրօնը եւ Շապուի արքայի ձեռքում դարձել էին մի սոսկալի զէնք, ոչնչացնելու ամէն ինչ, որ սուրբ էր, որ նուիրական էր Հայաստանում» Բաֆֆի, *Երկերի ժողովածու* Տաս, Հտր. 7, էջ 29-30:

¹¹⁷ Բաֆֆի, *Երկերի ժողովածու* Տաս, Հտր. 10, էջ 34. նաեւ՝ *Մշակ*, 1880, թիւ 121:

THE RELIGIOUS CONVERSION DISCOURSE IN RAFFI'S LITERARY WORKS

(Summary)

NORA BAROUDJIAN

nora.baroudjian@gmail.com

Moslem or Islamized Armenians existed in different centuries and in different contexts.

In the late 19th century religious conversion was one of the topics that most concerned the renowned Armenian novelist Raffi (1835-1888). He included this issue in his historical novels, which covered different periods of Armenian history till the 4th century. Transforming historical figures into literary characters, he relocated cultural and socio-political issues of his time in a broader historical perspective.

Raffi made good use of his writing as a means of disseminating his ideas and views. However, to serve his aim, certain historical facts were transformed, but not tarnished. This duality, however, created a contradiction, which is a characteristic of his literary works. His historical novel, *Samuel* is such an example.

Religious conversion during the 19th century had three variations: denominational conversion, forced conversion and conversion by personal will.

Raffi separated these three conversions, trying to distinguish each. According to Raffi, incoming novel ideas become beneficial when they pass through an Armenianisation phase. Raffi disseminates this view in his novel by characterizing Mesrob Mashdots as the cleric who initiated the process of Armenianising Christianity. Raffi applied the same argument to the new, incoming Christian sects. By becoming Armenian they would cultivate uncultivated Armenian space. Several heroes in Raffi's other novels are epic characters who personify this mission.

As for moslem Armenians, Raffi divides them into two groups: those who were forcefully islamised and those who were converted willingly. The forcefully islamized Armenians maintain their Armenianness inherently. They contribute to the effort of supporting the nation. As for the others, they damage the nation; they have distanced themselves from Armenianism for good. Raffi concludes that religion which is beneficial to the nation is Armenianised and that which damages alienates the nation.

Both Western and Eastern Armenian 19th century intellectuals made huge efforts to overturn the theory religion was the basis of the unity of the nation and give leverage to culture as the sole basis for the unity of the nation.

